Azg
armenian daily

Մարտ 6 Շաբաթ 1993

օրաթերթ
Գ տարի, թիվ 41 (292)
գինը 3ռ.
դասիչ 69149

Երևան 375010
Հանրապետության 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Վրաստան

Շեւարդնաձե. Գազատարը «հուսալիորեն կոպաշտպանվի»

Վրաստանի Խորհրդարանի նախագահ է Շեւարդնաձեի կարգադրությամբ Հայաստան մտնող գազատարը հայտարարված է արտակարգ կարեւորագույն օբյեկտ. մարտի 5-ին հաղորդեց «Նոյյան տաղան»ը: Շեւարդնաձեն այն կարծիքն է հայտնել, թե գազատարի ղայթակղումները եւ գնացքների խորտակումը նրանց ձեռքի գործն է, ովքեր ուզում են լարվածություն ստեղծել Վրաստանի եւ Հայաստանի փոխհարաբերություններում: «Ոստիկանության նոր կազմավորումները եւ ղեկավարության հատուկ ստորաբաժանումները ղատասխանատվություն կկրեն բեռների անվտանգության համար: Չնայած գգալի ծախսերին, դրանք անկասկած արդարացված են», ասել է Շեւարդնաձեն: ԵՏ

Պատմական

Նախագահի մամուլի ծառայության հայտարարությունը

Երեկ ՀՀ Նախագահի մամուլի ծառայությունը հանդես է եկել մի հայտարարությամբ, ուր ասվում է, թե Լեռնային Ղարաբաղին նվիրված համաժողովի Մինսկի խմբի անդամներն այս շաբաթ նախնական համաձայնության են հանգել մի կարեւոր փաստաթղթի կառակցությամբ, որը հնարավոր կդարձնի դիտորդների տեղակայումը Լեռնային Ղարաբաղում վերջնական հրադադար հայտարարելու համար:

Փաստաթուղթը, որը հայտնի է «լիազորությունների դայմաններ» անվամբ, սահմանում է դիտորդների առաջադրանքները եւ կարեւոր քայլ է առճակատման թուլացման ուղղությամբ: Ըստ այդ փաստաթղթի, միջազգային դիտորդները տեղակայվելու են հակամարտության գոտում մի քանի հատուկ ռազմական քայլեր վերահսկելու նպատակով, ինչը դեռեւ է հանգեցնի զինված ընդհարման դադարեցմանը, ինչպես նաեւ գոտափակումների վերացմանը, մարդասիրական օգնության անխոչընդոտ մատակարարմանը:

Հայաստանն այս նախնական համաձայնությունը դիտարկում է որպես դեռեւս համեստ, սակայն հուսադրող նշան այն բանի, որ կողմերը կարող են դատրաստ լինել Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ լուծմանը: Հայաստանն ակնկալում էր, որ առճակատման վերացումն անհրաժեշտ քայլ կլինի Մինսկի համաժողովի բացման համար, որը կորոշի Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը:

Երկրորդ եւ հավասարապես կարեւոր փաստաթուղթը, որի շուրջ դեռեւ է բանակցություններ տեղի ունենան, հրադադարի կիրառման «գրաֆիկն է»: Մենք ակնկալում ենք բոլոր կողմերի մասնակցությունն այս փաստաթղթի դատրաստման գործում:

Հակամարտության հենց սկզբից Հայաստանի կառավարությունը գտնում էր, որ խնդիրը դեռեւ է լուծվի քաղաքական եւ ոչ թե ռազմական միջոցներով: Բանակցությունների միջոցով ձեռք բերվելիք լուծումն առաջին հերթին դահանջում է, որ Ադրբեջանը հրաժարվի հարցը զենքի ուժով լուծելու քաղաքականությունից եւ դադարեցնի ագրեսիան Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաեւ Հայաստանի սահմանների նկատմամբ:

Դժբախտաբար, երկու կողմերը բազմաթիվ կորուստներ դեռեւ է ունենային, որպեսզի Ադրբեջանն սկսեր լրջորեն վերաբերվել հարցի խաղաղ լուծման հնարավորությանը:

Հայաստանը դեռեւս վստահ չէ, որ Ադրբեջանը հրաժարվել է խնդիրը զենքի ուժով լուծելու եւ Լեռնային Ղարաբաղում էթնիկական զտում կատարելու քաղաքականությունից, եւ Ադրբեջանի դիրքորոշման մեջ տեղի ունեցած փոփոխությունն ընդամենը ժամանակավոր մարտավարական տեղաշարժ չէ՝ կառված վերջերս Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերից Ադրբեջանի կրած դարտությունների հետ:

Ինչեւէ, Հայաստանը հույս ունի, որ Ադրբեջանի նոր դիրքորոշումը երկարատեւ կլինի, հնարավորություն տալով շուտափույթ համաձայնություն ձեռք բերել երկրորդ փաստաթղթի կառակցությամբ, որը կհանգեցնի հրադադարի:

Հայաստանի կառավարությունը հույս ունի, որ Ադրբեջանը կդադարեցնի Հայաստան մտնող գազատարի եւ ճանապարհների նկատմամբ իր ահաբեկչական գործողությունները եւ ուղիղ երկխոսություն կսկսի Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հետ՝ խաղաղ գործընթացին վերաբերող փաստաթղթերի ու հրադադարի իրականացումն առահովելու նպատակով: ■

Ճակատ

ՄԱՐՏԱԿԵՐՏ. ԿԱՏԱՂԻ ՄԱՐՏԵՐ ՍԱՐՍԱՆԳԻ ՀԻԴՐՈՀԱՆԳՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

Հադրութ շրջկենտրոնում պարետային ժամ է մտցվել

Ինչպես Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից **ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ**, կարճատեւ անդորրից հետո ադրբեջանական բանակը մարտի 4-ի երեկոյան լայն գրոհ է ձեռնարկել Սարսանգի հիդրոհանգույցի ուղղությամբ: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը հետ են մղել գրոհը, բնանմուն դատճառելով մեծ կորուստներ: Նախնական տվյալներով, ադրբեջանական բանակը տվել է մի քանի տասնյակ զոհ, բազմաթիվ վիրավորներ: Հայկական կողմից կան վիրավորներ, որոնց թիվը ճշտվում է: ԼՂՀ ինքնապաշտպանության շտաբում համոզված են, որ ադրբեջանցիներն ամեն գնով կձգտեն վերադարձնել Սարսանգի հիդրոհանգույցը, որը շրջանում կարեւորագույն ստրատեգիական նշանակություն ունի: Հիշեցնենք, որ Ադրբեջանի 5 շրջաններ ջուր են ստանում Սարսանգից:

«Սնարֆ» լրատվական գործակալությունը, վկայակոչելով ԼՂՀ լրատվության եւ մամուլի դեղարտամենտից ստացված տեղեկությունները, հայտնում է, թե երեկ, մարտի 5-ին ԼՂՀ դատշտանության դեսական կոմիտեի կարգադրությամբ Հադրութ շրջկենտրոնում մտցվել է դարետային ժամ: Այս որոշումը դայմանավորված է վերջին շրջանում Հադրութ ավանում դատահած հակաօրինական դեդքերի հետ, որոնց հետեւանքով տուժել է ԼՂՀ զինված ուժերի 5 զինվոր: Իրական վտանգ կա, թե իրադրությունը դուրս կգա հսկողությունից:

Պաշտպանության դեսական կոմիտեն, հայտնում է «Սնարֆ»ը, ԼՂՀ զինվորական դարետատանը, ներքին գործերի նախարարությանը եւ ազգային անվտանգության վարչությանը հանձնարարել է միջոցներ ձեռք առնել հնարավոր անօրինականությունները կանխելու, մեղավորներին հայտնաբերելու եւ ռազմական օրենքներով դատասխանատվության ենթարկելու համար:

Հադրութի շրջան են ուղարկել հատուկ օդերեւութային ֆենչական խումբ եւ անհրաժեշտ ուժեր կարգուկանոնի դահդանության համար, հայտնում է «Սնարֆ»ը: «Ազգ»

Էջխարհ

Մ. Նահանգները կրճատելու է օգնությունը Իսրայելին

Իսրայելում Մ. Նահանգների դեսդան Ուիլյամ Հերրոդը հայտարարեց, թե Վաշինգտոնը դետք է կրճատի Իսրայելին տրվող իր օգնությունը, նկատի ունենալով տնտեսական բարեփոխումների անբավարար ընթացքն այդ երկրում: Առաջիկա ֆինանսական տարվանից սկսած, որ Միացյալ Նահանգներում սկսվում է հոկտեմբերից, առնվազն 3 միլիարդ դոլլարով դետք է կրճատվի Իսրայելին տրվող օգնությունը, հայտարարեց նա: Վերջին շրջանում Վաշինգտոնում դաշտոնատարներից ոմանք նման մտքեր են արտահայտում, Իսրայելին կցելով նաեւ Եգիդտոսը, շեշտելով այդ երկու երկրներին տրվող տարեկան շուրջ 9 միլրդ դոլլարի զինվորական օգնությունը կրճատելու անհրաժեշտության մասին:

Սադդամ Հուսեյնը փնտրում է ամերիկացիների վստահությունը

Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը Իտալիայի հեռուստատեսությանը տված հարցազրույցում արտահայտվել է Իրաքի եւ ԱՄՆ-ի միջեւ նոր հարաբերությունների հաստատման օգտին: Նա ասել է. «Մենք մտադիր ենք գործակցել բոլոր նրանց հետ, ովքեր շահագրգռված են Մերձավոր Արեւելքը զանգվածային բնաջնջման զենքից զերծ գոտու վերածելով: Ամերիկացիները դեռ կիմանան, որ իրաքցիներն արժանի են վստահության»: Հուսեյնի խոսքերով, ինքը դատրաստ է Իսրայելի հանդեդ Իրաքի դիրքորոշումը վերանայել այն դեդքում, եթե գտնվի դաղեստինյան հարցի ընդունելի կարգավորում:

Բոսնիա. ՄԱԿ-ի խումբը հասնում է դատարված Սերսկա

ՄԱԿ-ի ֆենչիների մի խումբ երկար բանակցություններից հետո երեկ հասավ Սերսկա քաղաք արեւելյան Բոսնիայում, որ 11 ամիս մեկուսացած էր արտաքին աշխարհից: Անցյալ շաբաթ սերբերը գրավել էին այն, եւ ֆենչիների խումբը նդատակ ունի այնտեղից էվակուացնել հեռանալ ցանկացող մահմեդականներին: Վերջիններիս բանբերը Սարաեւոյում հայտարարեց, թե միջազգային կազմակերդության նման քայլը փաստորեն կխաչաքերի սերբերին «էթնիկական մաքրագործումների» քաղաքականության մեջ:

Նյու-Յորքի դայթյունի կասկածելիներից մեկը ձերբակալվեց

Դաշնակցային ոստիկանությունը ձերբակալեց անցյալ ուրբաթ օրը «Նյու Յորքի համաշխարհային առեւտրական կենտրոնի՝ Թուին բաուր համալիրի դայթեցման մեջ կասկածելիներից մեկին: 26 տարեկան կասկածելին, որ կոչվում է Մոհամեդ Սալումե, կապ ունի Նյու Ջերսիի մզկիթներից մեկին կցված բեյխերից մեկին եւ, ըստ ոստիկանության, դատկանում է մահմեդական արմատական շարժումներից մեկին: Մասնագետները հայտնաբերել են, որ շուրջ 700 կիլոգրամ դայթուցիկը 110 հարկանի համալիր է մտցվել ավտոմեքենայով եւ դայթել ստորգետնյա կանգառներից մեկում: ■

ԵԱՀԽ

Հռոմի բանակցություններ. Տեղաշարժ թե տեղատություն

Ռուսաստանն առաջարկում է Մինսկի խորհրդաժողովը հրավիրել հրադադարից 60 օր անց

Լեռնային Ղարաբաղի հարցով զբաղվող ԵԱՀԽ Մինսկի խմբի նիստերում Հռոմում փետրվարի վերջերին համաձայնեցվեց ԵԱՀԽ դիտորդների առաջավոր խմբի մանդատի նախագիծը: Այն կներկայացվի ԵԱՀԽ ավագ դաշտոնատար անձանց կոմիտեի հաստատմանը: Սա առաջին կարեւոր տեղաշարժն է հակամարտության կարգավորման մեջ, «ԻԴ»-ին հայտարարեց Ռուսաստանի միջնորդական առաքելության դեկավար Վլադիմիր Կազիմիրովը:

Հռոմի նիստերում Ռուսաստանը մասնավորապես առաջարկել է Մինսկի խորհրդաժողովը հրավիրել հրադադարից 60 օր անց: ԻԴ

Թերեւս Ղարաբաղ գործուղվեն ԵԱՀԽ դիտորդներ

Լեռնային Ղարաբաղին նվիրված Հռոմի բանակցությունների մասնակիցները ԵԱՀԽ շրջանակներում նախնական համաձայնության են հասել Ղարաբաղի հյուսիս գործուղել մի խումբ միջազգային դիտորդներ: Այդ մասին ուրբաթ օրը Հռոմից վերադառնալուն դես լրագրողներին հայտնեց Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովը, հաղորդել է Ինտերֆաքսը:

Նա միաժամանակ նշեց, որ դեռ որոշված չէ խմբի ֆինանսավորման աղբյուրը: Դա դետք է ճշտվի հետագա խորհրդակցությունների ընթացքում:

Թ. Ղասիմովի խոսքերով, Հռոմում նախնական կարգով ընդունված որոշումը կներկայացվի ԵԱՀԽ ավագ դաշտոնատար անձանց կոմիտեի քննարկմանը, որի նիստը նախատեսված է ապրիլի 26-ին Պրահայում: Եթե կոմիտեն հաստատի դիտորդների գործուղման դայմանավորվածությունը, առա կսկսվի այդ ձեռնարկման մանրակրկիտ մշակումը: ԻԴ

Հիմմեթ Չեթինը Բաքվում

Այսօր Բաքու է ժամանում Թուրքիայի արտգործնախարար Հիմմեթ Չեթինը, որը խորհրդակցություններ կանցկացնի Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի հետ Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման վերաբերյալ: Նախագահ Էլչիբեյի մամուլի քարտուղար Արիֆ Ալիեւը «Թուրան» գործակալությանը հայտնեց, թե նախագահի հետ խորհրդաղահական հանդիդումից հետո Չեթինն անմիջաղես կվերադառնա Անկարա:

Մարտի 4-ին Մոսկվայում Հիմմեթ Չեթինն այս հարցով խորհրդակցություններ է անցկացրել Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւի հետ: Չի բացառվում, որ Չեթինն Ադրբեջանի նախագահին կառաջարկի հիմնախնդրի կարգավորման ռուս-թուրքական տարբերակը:

Սնարֆ-Թուրան

Էջխարհ

Սուխումում զոհերը եւ վիրավորները հիմնականում հայեր

Մարտի 5-ին, ժ. 11-ի մոտ երկու Սու-25 ռազմական օդանավ հրթիռակոծել են Սուխումը: Այդ մասին «ԻԴ»-ին հաղորդեցին Աբխազիայում տեղակայված վրացական զորքերի հրամանատարության աղբյուրները: Կան վիրավորներ, վնասվել է մի քանի շենք: Օդանավերի դատկանելությունը չի նշվում: Մինչդեռ մարտի 4-ին եւ 5-ին հակամարտության գոտում ռազմական գործողություններ աշխուժացել են: Տեղի էր ունենում ակտիվ հրետանային փոխհրաձգություն: Ինչպես հաղորդեց Վրաստանի դաշտպանության նախարարության մամուլի կենտրոնը, Սուխումի հրետակոծման հետեւանքով մեկ մարդ զոհվել է, մի քանիսը վիրավորվել: Գուդաուտայից ստացված ճշգրտված տվյալներով, վրացական օդուժի ռմբակոծման հետեւանքով, որ տեղի էր ունեցել մարտի 4-ին, Նովի Աֆոն եւ մոտակա գյուղերում զոհվել է 9 եւ վիրավորվել 18 մարդ, հիմնականում ազգությամբ հայ կանայք եւ երեխաներ: Աբխազիայում գտնվող Վրաստանի դեկավար Էդուարդ Շեւարդնաձեն մարտի 4-ին այցելեց Գալիի եւ Օչամչիրայի շրջանները: Նա հանդիդումներ ունեցավ բնակչության, տեղական վարչակազմի դեկավարների, ռազմականների հետ, եղավ մարտական դիրքերում: ԻԴ

Երեւան

Դարձյալ հացի խնդիր

Քաղխորհրդի դատգամավորներն մարտի 5-ին հերթական նստաշրջանում մայրաքաղաքում հացի արտադրման ու վաճառքի կազմակերդման գործը անբավարար գտնելով, որոշեցին քաղաքային դեկավարությանը գործունեության նդատակահարմարությունը: Որոշվեց նաեւ մայրաքաղաքի ՆԳ վարչությանը հանձնարարել ուժեղացնել հսկողությունը հացի անօրինական վաճառքը գործարաններում, խանութներում, ինչպես նաեւ վերավաճառքը փողոցներում արգելելու նդատակով: «Ազգ»

digitised by A.R.A.R.@

Գիտ

ԽԱՉԻԿ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԸ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ԲՈԼՈՐԻՆ

Իր ոչգամավորական լիազորությունները վայր դնելուց հետո, երեկ ՀՀ ԳԽ նախագահության անդամ, Ադեսի գոտու եւ փախստականների հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խաչիկ Ստամբոլցյանը երեկ լրագրողների դահին ներկայացրեց իր կյանքն ու հասարակական-քաղաքական գործունեությունը, նշելով, որ ինքն անընդհատ հետաքննվել է ՊԱԿ-ի կողմից, կրել զրկանքներ, իսկ վերջին երկու տարվա ընթացքում տարվել է նրա անունը անհիմն վարկաբեկելու քաղաքականություն: Իր հրաժարականը «Գթություն» բարեգործական միության նախագահը դադարեցնում է այն փաստով, որ խորհրդարանը 4 անգամ քվեարկելուց հետո չընդունեց ադեսի գոտու համար 7,5 մլն. ռուբլի Ռուսաստանում սառեցված գումարները Հայաստան բերելու հարցը եւ հետո, չանցավ բարեփոխումների օրենքը: Ստեղծված իրավիճակում Խաչիկ Ստամբոլցյանը մեղավոր համարեց ոչ միայն ընդդիմությանը, այլեւ իշխանություններին ու ՀՀՇ-ին, որի անդամն է նաեւ ինքը:

Նրա կարծիքով, ՀՀՇ-ի ամենամեծ սխալն այն էր, որ անցնելով իշխանության գլուխ, կառավարությունը բողոց նախկին նոմենկլատուրայի ձեռքում:

Նա բողոքեց նաեւ, որ մինչեւ օրս ոչ հանրապետության նախագահը, ոչ էլ Գերագույն խորհրդի նախագահը չեն հետաքրքրվել իր հրաժարականով: Այնուհետեւ, Խաչիկ Ստամբոլցյանը հայտարարեց, թե ադեսի գոտու համար պետք է պատասխանատվության կանչել նախկին պետնախարար Ռուբեն Չիֆթալարյանին, որը մեծ անօրինականություններ է արել եւ այժմ գտնվում է արտասահմանում: Մինչեւ այժմ պարզ չէ, թե ադեսի գոտու հաշվով որքան վայրուսար է կուտակված, քանի որ նախկին ֆինանսների նախարար Ջանիկ Ջանոյանը նախ բաքգրել է դա, իսկ հետո միայն հայտնաբերվել են ֆինանսական կողմից խախտումներ եւ խոշոր չափերի փասնող չարաշահումներ: Ավելին, ադեսի գոտու համար հատկացված տարադրամը օգտագործվել է այլ նպատակներով, Դեռ իր առաջարկին ստեղծել ադեսի գոտու հարցերի նախարարություն, ոչ մի վարչապետ չի աջակցել, որովհետեւ կառավարությունում միշտ մտավախություն է եղել, թե կրթահայվեն իրենց կատարած անօրինականությունները: Խաչիկ Ստամբոլցյանն անդրադարձավ նաեւ կուսակցությունների գործունեությանը հատկապես իրեն հատուկ ուղղամտությամբ դեմարշներ կատարեց դաշնակցականների ու ռամկավարների նկատմամբ: Իսկ ինքը պատասխանատվությունից չի խուսափում եւ անգամ ֆինական օրգանների ստուգումներ ցույց են տվել, որ «Գթություն»ը մաքուր է իր հաշիվներում:

Ստամբոլցյանը հայտարարեց, թե հանրապետությունում անիշխանություն է, մաֆիոզ խմբավորումներն ինչ ուզում անում են, եւ ինքը որպես ազգային եւ քաղաքական գործիչ (նա դրանք չի առանձնացնում), պետք է պայքարի առանց պատգամավորական մանդատի: Ու թեեւ դեռ պարզ չէ, թե Գերագույն խորհուրդը կընդունի՞ արդյոք նրա հրաժարականը, Ստամբոլցյանը որոշել է այլեւս չմասնակցել «խիստ քաղաքականացված» խորհրդարանի աշխատանքներին եւ արդեն պատրաստվում է մասնակցել խորհրդարանական հաջորդ ընտրություններին:

Ա.Հ.

Կարգուկանոն

Քրեածին երեւույթների դեմ պայքարը շարունակվում է

Երեկ կայացած բրիֆինգում Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Արամ Աբրահամյանն անդրադառնալով Լեռնային Տեր-Պետրոսյանի անցկացրած վերջին երկու խորհրդակցություններին, նշեց, որ տնտեսությունը կարող է նորմալ գործունեություն ունենալ միայն օրինականության պայմաններում: Նրա կարծիքով, Հայաստանում կան ուժեր, որոնք շահագրգռված են անօրինականության եւ անիշխանության խորացման մեջ, դրանով իսկ հետաքննելով որոշակի տնտեսական շահեր: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, այս կամ այն քաղաքական հոսանքի կոչերի եւ կարգախոսների արտաքին տուի տակ թաքնված են որոշակի խավերի նյութական եւ տնտեսական շահերը: Մամուլի քարտուղարը նաեւ նշեց, որ հին վարչակարգից մնացած պատշոնական եւ սվերդային կառույցները երկուսուկես տարում անհնար է ոչնչացնել եւ միանգամայն կլինեն կարծել, որ այդ կառույցների տերերը հեշտությամբ կզիջեն իրենց դիրքերը: Հակառակը, նրանք ամեն կերպ կջանան խանգարել թե պետական եւ թե մասնավոր ձեռնարկությունների աշխատանքը: Արամ Աբրահամյանն այդ առթիվ հայտնեց, թե այսօրվա խիստ քաղաքականացված մթնոլորտում հանցագործները փնտրում եւ գտնում են այս կամ կուսակցության հովանավորությունը, որի հետեւանքով սովորական քրեական գործը ձեռք է բերում քաղաքական երանգ: Այդ է պատճառը, որ Հայաստանի իշխանությունները շարունակելու են իրենց պայքարը բոլոր քրեական երեւույթների դեմ: ■

Հարց

Արտագաղթը Հայաստանից նվազում է

Վերջին տարվա ընթացքում 1988 թ. համեմատ 6–7 անգամ նվազել է արտագաղթի հոսքը Հայաստանից: Այդ մասին «ԻՖ»ի թղթակցին հաղորդեց արտաքին գործերի եւ օտարերկրյա քաղաքացիների հաշվառման եւ գրանցման վարչության պետ Մաքսիմոս Կոզլովսկին: Անցյալ տարվա մարտ ամսից մինչեւ ընթացիկ տարվա մարտը արտագաղթել է մոտ հազար ընտանիք: Հայաստանից դուրս են մեկնում հիմնականում հույները, հայերը կազմում են 15–20 տոկոս:

Նրա խոսքերով, մեկնում են գլխավորապես Հունաստան, ԱՄՆ, Մերձավոր Արեւելք: Ֆիզիկոսներն ու մաթեմատիկոսները նախընտրում են Ավստրալիան: ■

Էջ

«Հայաստան»-հիմնադրամը միասնության կոչ է անում

Երեկ կայացած մամուլի ասուլիսում «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Մանուսակ Պետրոսյանն ամփոփեց մեկ տարվա ընթացքում հիմնադրամի կողմից կատարված աշխատանքները: Նա կրկին նշեց, որ հիմնադրամի հիմնական նպատակն է համայն հայության ուժերի եւ կարողությունների համախումբ գործադրմամբ օգնել Հայաստանի զորացմանն ու բարգավաճմանը եւ կայուն հիմքեր ստեղծել ազգային պետականության ամրապնդման համար:

Ստեղծվել են հատուկ մեխանիզմներ ծրագրերի իրականացումը վերահսկելու համար, ինչպես նաեւ տեղական հանձնախմբեր, որոնք սփյուռքի տարբեր գաղթօջախներում եւ Հայաստանում կազմակերպում են հիմնադրամի աշխատանքները: «Արցախ» ծրագրի սահմաններում արդեն 200 մլն. ռուբլու դիզելային վառելանյութ է ուղարկվել ԼՂՀ, իսկ «Ջեռ-93» ծրագրի շրջանակներում մոտ 136 մլն. ռուբլու տրանսֆորմատորներ են տեղադրվել մայրաքաղաքի ծայրամասային շրջաններում, դրամական հատկացումներ են տրվել գերեկային ուսուցման ուսանողներին: Վերջում տիկ. Պետրոսյանը նշեց, թե համազգային կառույցները պետք է հաշտվեն Զանգեզուրի ճանապարհաշինարարության ծրագիրը եւ Իրան-Հայաստան գազամուղի կառուցումը: «Ազգ»

Տրանսպորտ

Տրամվայները կես ուժով

Ինչպես մեզ հայտնեց «Երուղեւորտրանս» միավորման տրամվայի ձեռնարկության պետ Մարտուն Սահակյանը, Էներգետիկ ճգնաժամի պատճառով մայրաքաղաքում առայժմ ինչ որ չափով գործում է ձեռնարկության միայն առաջին տեղամասը:

Իսկ աշխատող առաջին տեղամասից գիծ են դուրս գալիս միայն 2 եւ 12 համարի երթուղիները սպասարկող տրամվայները, այն էլ աշխատում են կիսաս երթուղով. 2-րդ համարը տրամվայի հավաքակայան–«Այրարատ» կ.թ.–երկաթուղային կայարան–Բաթումի եւ հետադարձ երթուղով, իսկ 12-ը՝ հավաքակայան–Արաբկիրյաց պողոտա–ավտոդեպոների գործարան եւ հետադարձ երթուղով: Մոտ օրերս նախատեսվում է գործարկել նաեւ թիվ 7 երթուղին, առայժմ Զեյթուն–երկաթուղային կայարան գծով:

Վերոհիշյալ երթուղիներով օրական գիծ է դուրս գալիս 17-19 տրամվայ (մարտի 5-ին աշխատանքի է դուրս եկել 18 տրամվայ): Ձեռնարկության տնօրենը նշեց, որ տրամվայների աշխատանքի խոչընդոտը էլեկտրական հոսանքի բացակայությունն է: Հոսանքի նորմալ մատակարարման դեպքում տրամվայի ձեռնարկությունը կաշխատի ամբողջ կարողությամբ: «Ազգ»

Բարեւ

Իսա Ղամբարովը գտնում է, որ Ադրբեջանում լարվածությունը թուլանում է

Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Իսա Ղամբարովը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղում հայկական կազմավորումների հարձակման առաջացրած հասարակական-քաղաքական լարվածությունն ասպիճանաբար թուլանում է: Ներկայումս, «ԻՖ»-ին հայտնեց Ի. Ղամբարովը, շարունակվում է փետրվարի կեսերին ազգային բանակում սկսված կազմակերպական վերակառուցումը: Ի. Ղամբարովը գանգատվեց, որ «Հայաստանի շարունակվող ագրեսիան եւ մարտական գործողությունների ծավալումն Ադրբեջանին թույլ չեն տալիս կենտրոնանալ տնտեսական բարեփոխումների վրա»: ԻՖ

Պաշտպանության պետկոմիտեի նիստում

Մարտի 4-ին Բաքվում կայացած պաշտպանության պետկոմիտեի նիստի ուշադրության կենտրոնում էին Ադրբեջանի ազգային պաշտպանության հիմնադրույթներն ու խնդիրները: Մասնավորապես, նշվել է շրջանում խաղաղություն եւ անվտանգություն ձեռք բերելու, բարիդրացիության քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը: Նիստին մասնակցել է Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը: ԻՖ

Մոսկվան ճնշում չի գործադրում Բաքվի վրա

Աբուլֆազ Էլչիբեյի պնդումները, թե Ռուսաստանը փորձում է հարկադրել Ադրբեջանին մտնել ԱՊՀ կազմի մեջ, «իրականությանը չեն համապատասխանում եւ ուստի չեն կարող զարմանք յաուաշացնել»: Մարտի 5-ին այդպիսի հայտարարությամբ հանդես եկավ Ռուսաստանի արտգործնախարարությունն անցյալ շաբաթ Բաքվում կայացած ժողովրդական ճակատի ներկայացուցիչների խորհրդակցության ժամանակ Ադրբեջանի նախագահի ելույթի կապակցությամբ: Հայտարարությունում ասվում է, թե Ռուսաստանի ղեկավարությունը բազմիցս նշել է, որ «ԱՊՀ կազմի մեջ մտնելու կամ չմտնելու հարցը Ադրբեջանի ներքին գործն է եւ ոչ մի կերպ չի անդրադառնա երկկողմանի հարաբերությունների վրա»: «Մեր գիծը մնում է անփոփոխ», նշվում է փաստաթղթում: ԻՖ

Բանակ

Հայաստանը կատարում է պայմանագրի պայմանները

Մեկնաբանելով Կրասնոդարի երկրամասի խորհրդի սոցիալական պաշտպանվածության եւ մարդու իրավունքների նախագահ Վ. Լուշտայի հայտարարությանը, որը նա արել էր այն բանից հետո, երբ երկրամասի պատվիրակությունն այցելեց Վրաստանում եւ Հայաստանում տեղակայված Ռուսաստանի սահմանապահ ուղեկալները, Դաշնակցային Ռուսաստանի սահմանապահ զորքերի գլխավոր վարչության մամուլի բյուրոյի պետ մայոր Անդրեյ Ալյոշինը հայտարարեց, որ «Հայաստանի տարածքում տեղակայված Ռուսաստանի սահմանապահ զորքերի կարգավիճակի մասին միջպետական պայմանագիրը ստորագրվել է 1992 թ. սեպտեմբերի 30-ին երկու երկրների կառավարությունների ղեկավարների կողմից: Այդ փաստաթղթի համաձայն, Ռուսաստանի սահմանապահ զորքերի դուրս բերման կոնկրետ ժամկետները կորոշվեն այն բանից հետո, երբ Հայաստանը պատրաստ լինի պահպանել Թուրքիայի եւ Իրանի հետ իր սահմանները: Վ. Լուշտայի հայտարարությունը, թե ոչ մի հաձայնագիր չկա Հայաստանի եւ Անդրկովկասի սահմանապահ օկրուգի միջեւ, սխալ է, քանի որ նախկին միջպետական պայմանագիրն արդեն վիճարկում է բոլոր իրավական հարցերը»: Ինչպես «Նոյյան տապան» գործակալությանը հաղորդեց Ա. Ալյոշինը, Ռուսաստանի սահմանապահ զորքերի ղեկավարությունում գտնում են, որ չնայած բոլոր տնտեսական դժվարություններին, Հայաստանն ընդհանուր առմամբ կատարում է միջպետական պայմանագրի պայմանները: Նա նաեւ նշեց, որ սկսած անցյալ տարվա աշնան վերջից մինչ այժմ Հայաստանում ոչ մի միջադեպ տեղի չի ունեցել ռուսաստանցի սահմանապահների եւ Հայաստանի քաղաքացիների միջեւ: ՆՏ

Եռասխ

Հայ-ադրբեջանական հանդիպում Սաղարակում

Ինչպես հաղորդեցին Հայաստանի նախագահի մամուլի ծառայությունից, մարտի 4-ին Հայաստանի Հանրապետության Արարատի շրջանի եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության Սաղարակի շրջանի սահմանին Երասխ կայանի մոտ տեղի է ունեցել երկու շրջանների ղեկավարների հանդիպում:

Տեղական կողմն ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ անցած երկու գիշերների ընթացքում Նախիջեւանի կողմից գնդակոծվել են հայկական ինքնաաշտպանության ուժերի դիրքերը: Ադրբեջանական կողմը, ընդունելով փաստերը, նշել է, որ կրակը բաց են արել Բաքվից ժամանած զինծառայողներ, որոնք իրենց չեն ենթարկվում: Նրանք խոստացել են համապատասխան միջոցներ ձեռք առնել սահմանային ընդհարումներ բացառելու համար:

Սաղարակի շրջանի ղեկավարները տեղեկացրել են նաեւ, որ շարունակվում է ինֆարիոնների Բաքվից մարդասիրական օգնության առաքումը Նախիջեւան: ■

Հա. Կովկաս

Հրատարակվել է Հայաստանի նախագահի գիրքը

Երեւան, մարտ 5, «Սնարք»: «Դասախոսություններ հայ եկեղեցական գրականության շուրջ», այսպես է կոչվում Հյուսիսային Կովկասի առողջարանային քաղաքներից մեկում հայերեն լույս տեսած գրքույկը: Դրա հեղինակը բանասիրության դոկտոր Լեւոն Տեր-Պետրոսյանն է: Ինչպես հաղորդում է «Սնարք»-ի թղթակիցը, Հայաստանի նախագահի գրքույկը հրատարակվել է Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդ, տեր Եզնիկ ավագ քահանա Պետրոսյանի օրհնությամբ, հայտնի գործարար Արտյոմ Աբրայանցի միջոցներով, որն օրերս Հայաստանի նախագահի հրամանագրով նշանակվեց նրա արտաքին տնտեսական կապերի գծով խորհրդական: 80 էջանոց գրքույկը, որը հրատարակվել է 10 հազար օրինակ տպաքանակով, արդեն վաճառքի է հանվել եւ առաջին գնորդներին գտել առողջարանային քաղաքների բնակիչների եւ հյուրերի մեջ: ■

Բարեւ

Դրամաշնորհներ ամերիկյան հովանու տա՞կ

ՀՀ դատախազության կողմից «Համատեղ զարգացման ուղիներ» ամերիկյան կազմակերպության պատշգամբում անձանց նկատմամբ քրեական գործ է հարուցվել: Մասին Արմենպրեսի թղթակիցը ասաց հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Վլադիմիր Հովհաննիսյանը:

Դրա համար հիմք է հանդիսացել հանրապետության մեծ թվով քաղաքացիների բողոքը, որոնց հետ նշված կազմակերպության անունից ԱՄՆ-ի քաղաքացի Ռ. Պետրոսյանը եւ Հայաստանի քաղաքացի Վ. Սահակյանը մեկ տարի առաջ պայմանագրեր էին կնքել եւ վերջիններից հավաքելով 10 միլիոն ռուբլուց ավելի գումար, տեղափոխվել Մոսկվա: Նրանք 1992 թվականի ամռանը եւ աշնանը հանրապետության տարածքում նաեւ վիճակախաղ են անցկացրել:

Այժմ քաղաքացիները բողոքում են, որ վերոհիշյալ կազմակերպությանն իրենք գումար են տրամադրել հետագայում բարձր տոկոսներով եւ սպանալու պայմանով, մինչդեռ ստացել են դրամի արժեզրկման հետ համեմատած չնչին ավելացումով: Շատերն էլ հայտարարում են, որ իրենց մոտած գումարներն ընդհանրապես չեն կարողանում ետ ստանալ:

Արմենպրես

Հայաստան չհասնող թերթերի բաժանորդային վճարը վերադարձվելու է 4 ամիսը լրանալուց հետո: ՀՀ մամուլի տարածման գործակալության բաժանորդագրային բաժնի ղեկավար Լաուրա Ավագյանը հայտնեց, որ չնայած հաղորդակցության վատ աշխատանքին, համենայն դեպս, մոսկովյան թերթերի եւ ամսագրերի մեծ մասը 28 անուն, Հայաստանը ստանում է: ՆՏ

digitised by A.R.A.R.@

Հարցում

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԹԵ...

Ժողովրդավարության հաստատման ճանապարհին ամենադժվար փոփոխություններից մեկը հանգում է նրան, որ անհրաժեշտ կլինի անցնել շատերի համար մտածողության նոր ձևերի:

Մեր նորաստեղծ պետության, ժողովրդավարության հաստատման ու ամրապնդման, ժողովրդի արժանապատվության պահպանման մտահոգիչ խնդիրներն այսօր հուզում են շատերին: Ժողովրդի համար ներկա ծանրագույն եւ փորձություններով հագեցած ժամանակներում դրանց արժեքավորումը եւ առաջան շատերին ստիպում են խորհել ու համապատասխան՝ գործելակերպ մշակել: Մեր դիտարկումները ցույց տվեցին, որ շատերը՝ սկսած անհատներից վերջացրած կուսակցություններով, դեռ հստակ չեն կողմնորոշվել շատ ու շատ դանկյունաթարային հարցերի շարջ: Այդպիսի հարցերից է իշխանության մասին հարցը, որը առաջին հայացքից կարող է երկրորդական թվալ:

Ներկայումս Հայաստանում ստեղծված իրավիճակը գրեթե բոլոր խավերի մեջ առաջացրել է ներկա իշխանությունների փոփոխման հնարավորության մտայնություն: Ծանրագույն սոցիալական պայմանները, որոնցում գտնվում է հանրապետության ազգաբնակչությունը, առաջացրել են տիրություն, աղագայի նկատմամբ բացարձակ անհստակության զգացողություն:

Սոցիոլոգիական հարցում անցկացնելու ժամանակ այս մտահոգությունների դրսեւորումը գտնելու զգացումներով էինք առում նաեւ մենք: Դիտարկումները ցույց էին տալիս իշխանությունների փոփոխման ձեւերի վերաբերյալ մեծ անհանգստություն հասկանալ մտավորականության շրջանում: Տվյալ դարաշրջանում կարեւորության շեշտը չենք ցանկանում դնել այն հարցի վրա, թե մարդը դժգոհ է իշխանություններից, թե ոչ:

Այսօր դժվար թե գտնվի մեկը, որ էական ու լուրջ բերություններ չտեսնի իշխանությունների գործելակերպում, որը դժբախտաբար իրողություն է: Մեր մտահոգությունն այն է որ դեկավարության փոփոխման ինչպիսի տարբերակներ են հնարավոր, դրանցից որն է առավել նոդասավոր մեր հանրապետության կայացման, ժողովրդավարության ամրապնդման, ժողովրդի բարեկեցությունն ու արժանապատվությունը պահպանելու համար: Այս հարցում շատ կարեւոր է գիտակցել, որ նման հարցերում չի կարելի առաջնորդվել այս կամ այն կուսակցության, քաղաքական խմբակցության կամ իշխանության դեկին նստած այրերի շահերով:

Ցանկացած ժողովրդի, պետության համար անխուսափելի ու անդառնալի կորուստներ է բերում հեղափոխությունը:

Մեր այն հարցին, թե ներկայիս իշխանությունների փոփոխման որ ճանապարհն ենք նախընտրում, հեղաշրջման, առգատության կողմն է արտահայտվել հարցվածների 5,1 տոկոսը: Այդ այն դեպքում, երբ հարցվածների 26 տոկոսն է գտնում, որ նախագահն ու նրա վարչակազմն ի վիճակի են երկիրը դուրս բերել ճգնաժամից առաջիկա 1-2 տարում: Մեր խորին համոզմամբ, տա այն բանի դրսեւոն է, որ ժողովուրդը ներքուս գիտակցում է կայունության անհրաժեշտությունը, որի առկայության դայմաններում է միայն հնարավոր լուծել մեր առաջ ծառացած ծանրագույն խնդիրները: Իսկ դրամությունը գալիս է առաջացնելու խռովության միջոցով իշխանության եկած կուսակցությունդիկտատորի կամ անհատ-դիկտատորի (որը գոնե առժամանակ անխուսափելի է) եւ ժողովրդական զանգվածների միջեւ անխուսափելի քաղաքական եւ սոցիալական բախումը:

Բնականաբար հարց է առաջանում, ինչպես ազատվել անցանկալի դեկավարությունից: Անցանկալի, որովհետեւ հարցվածների երկու, երրորդը գտնում է, որ ներկա իշխանություններն անկարող են երկիրը հանել ճգնաժամից:

Օրենքով սահմանված ընտրությունների միջոցով դրսեւսխանան են ընտրել 30,5 տոկոսը, անհատաղ նոր ընտրությունների միջոցով (օրինականորեն) 28,3 տոկոսը:

Այսդիսով, բնակչության մեծամասնությունը կողմ է արտահայտվել այն գործելակերդին, որը օրինական է, սահմանադրական եւ որը երկրում կայունություն դահանջելու միակ հնարավոր տարբերակն է:

Շատ կարեւոր է, թե տվյալ հարցի վերաբերյալ ինչպիսի դիրքորոշում ունեն Հայաստանում գործող հեղինակավոր կուսակցություններն ու քաղաքական կազմակերդությունները: Բանն այն է, որ հարցմանը մասնակցածների 18,2 տոկոսը գտնում է, որ իշխանությունների փոփոխման լավագույն տարբերակն այսօր ճնշման միջոցով նրանց հրաժարական դահանջելն է: Այդ զանգվածին անհրաժեշտ է հեղինակավոր ու ուժեղ առաջնորդ ուժ, որը կարող է լինել ժողովրդի վստահությունը վայելող որեւէ կուսակցություն: Հուսադրող է այն հանգամանքը, որ եւ ՀՅԴ-ն, եւ ՀՌԱԿ-ն այսօր կանգնած են կայունության ու օրինականության դահանման դիրքերում ու մեծադես գիտակցում են խռովության հնարավոր վտանգավորությունը, որն առաջացում կարող է բուսերանգի նման հարվածել իրենց: Անհրաժեշտ է գիտակցել նաեւ, որ խռովարար ժողովրդական զանգվածների քաղաքական անդոդության դրսեւորը նրանց զգացմունքային դեպքի ժորժ, դիմեց նա դրն. Կիժմանին: Ֆրանսահայերն այլեւս այսդես են հարցերը դնում»:

Խոսակցությունների ժամանակ, երբ հայ գաղութի ներկայացուցիչներն առաջարկում էին զանազան ծրագրեր Հայաստանին նյութական օգնություն հասցնելու համար, Հանրի Վերնոյը դարձյալ միջամտեց. «Քանի անգամ եմ ասել, սակայն վախենում եմ, թե ասածներս սխալ ընկալվեն: Իհարկե, գիտեմ, որ Հայաստանը շատ բաների կարիք ունի: Ինչ որ կարող են, ափյուռահայերն արդեն էջից-շատից ուղարկում են: Երբ ավելին է դեսք, բոլոր դարձյալ ուղարկեմ, սակայն առանց կառավարությանը դիմելու: Քանի որ ֆրանսիական կառավարությունը կամ քաղաքական որեւէ կազմակերդություն մեկ-երկու օրանավ տրամադրելով ավելի շատ վնաս է հասցնում մեր գործին, քան օգնում: Ինչո՞ւ, որովհետեւ որոշ ժամանակ հետո այդ մարդասիրական օգնությունները նեսում են հայերի երեսին, ասելով, թե հայերը քաղաքական միջամտություն դահանջելու տեղ չունեն այլեւս»:

Փարիզահայի համար անսովոր էր այս երեկոն, անսովոր էին նշանավոր բեմադրիչի մոտեցումները հարցին: Հանրի Վերնոյը, շրջապատված ֆրանսիական քաղաքական դեմքերով, երեկոյի գլխավոր դեմքն էր դարձել եւ այն ազդանշանը, թե տասնամյակների լճացումից ֆրանսահայ գաղութը դատրաստ է դայքելու: «Հավատարիմ ազգի» համբավ ունեցող հայը կարող է նաեւ ատամներ ցույց տալ, որ գուցե «մտահոգում» է որոշ շրջանակների:

ՐԱՖԻ ՀԵՐՄՈՆ ՍՐԱԲՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Փարիզ

Փարիզ

Հանրի Վերնոյը դատրաստ դատասխանատվություն ստանձնելու

Ճանաչված կինոռեժիսորը դեմ է Հայաստանին մարդասիրական օգնությանը, քանի որ, ասում է նա, «ուղարկվող բոլոր կառավարական օգնություններն օգուտից ավելի վնաս են հասցնում հայ ժողովրդի այն հարցերին, որոնք քաղաքական լուծումների կարիք ունեն»:

Մարտի 1-ի երեկոյան, Փարիզի Չինվորականների ազգային կենտրոնում Ֆրանսիայի սենատի նախագահ դրն. Ռենե Մոնորիի հայերի դատվին տված կոկտեյլի ժամանակ, հայտնի բեմադրիչ Հանրի Վերնոյը դահլիճում հավաքված հայ համայնքի ներկայացուցիչներին հայտարարեց, թե «Կարելի է շատ բան անել, սակայն այստեղ մենք դատասխանատվություն չունենք: Հրամանը Հայաստանից դեսք է գա, Հայաստանի նախագահից, կառավարությունից կամ խորհրդարանից»:

Հանրի Վերնոյն այս խոսքերն ասաց ֆրանսիացի նշանավոր քաղաքական դեմքերի եւ ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչների միջեւ հանդիդումից անմիջապես հետո: Ճանաչված արվեստագետը իր մտերիմ, միջազգային հարաբերությունների գծով Ֆրանսիայի դեսնախարար Ժորժ Կիժմանի հետ խոսակցության ժամանակ խիստ քննադատեց Հայաստանի եւ Ղարաբաղի հարցում Ֆրանսիայի դրդեցած քաղաքականությունը: «Երբ դեսք լինի, դուք մեզնից ավելի լավ գիտեք եւ անցյալի ցեղասդանությունը, եւ այսօր Հայաստանի ու Ղարաբաղի դեմ գործադրվող անմարդկային աղաղակող փաստերը, ասաց նա: Սակայն մենք Ֆրանսիայի համար Թուրքիայի նման բանկ հանձնարող չենք, չենք կարող իմքնաբիտներ կամ միլիարդավոր դոլլարների հասնող ռազմական սարքավորումներ գնել: Ոչ էլ նավթ ունենք, որ շահագրգռենք ձեզ: Ունենք լոկ Ֆրանսիայի համար բաված արյունն ու քրտինքը, վճարած հարկերը եւ մեր բաց ճակատը: Կուզենայի տեսնել, թե հիմա Ֆրանսիան ինչպե՞ս է վերաբերվելու մեզ, տեսնելո՞ւ է մեր դեմ կիրառվող անիրավությունները: Սա է խնդիրը, սիրելի Ժորժ, դիմեց նա դրն. Կիժմանին: Ֆրանսահայերն այլեւս այսդես են հարցերը դնում»:

Հայաստանի Ազգային հերոսներ

Հարցումը տեղի է ունեցել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը, փետրվարի 12-20-ը Երեւան եւ Գյումրի քաղաքներում: Հարցումը ներկայացուցչական էր, բնդգրկել էր 18-ից բարձր տարիքի 1400 մարդկանց:

Գյումրի

Նոր նախագահ Ախալքալաքում

Վրաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահ, դետության դեկավար Էդուարդ Շեւարդնաձեի կարգադրությամբ Մերուժան Գոհարյանը նշանակվել է Ախալքալաքի շրջանային վարչության նոր նախագահ՝ շրջանային վարչություն կազմավորելու իրավունքով: Դա կատարվեց այն բանից հետո, երբ նախկին նախագահ Սամվել Պետրոսյանն իր իշխանության մեկուկես տարում չկարողանալով որեւէ էական բան փոխել տեղի ժողովրդի կյանքում, հրաժարական տվեց: Իսկ շրջանում գործող «Ջավախք. ժողովրդական շարժում» կազմակերդությունը տեղի ժողովրդի կողմից ոչ մի աջակցություն չգտնելով մնացել է սվերում:

Արդյոք ճի՞շտ են շուկները

Վերջին երկու ամիսներին շեշտակիորեն վատացել է էլեկտրաէներգիայի մատակարարումը Ջավախքին, որը «Վրացգլխէներգո»-ի համակարգից շրջանին էլեկտրաէներգիայի անկանոն մատակարարման հետեւանք է: Ջավախքցիները էլեկտրաէներգիա են ստանում հիմնականում գիշերները: Իսկ փետրվարի կեսերին, Հայաստան մտնող գազատարի դայթեցումից հետո, մոտ երկու շաբաթ ջավախքցիներն ընդհանրապես էլեկտրաէներգիա չստացան: Շուկներ էին դասվում, թե էլեկտրաէներգիան տրվում է Հայաստանին: Հարցի իսկությունը դարզել չհաջողվեց: Իսկ շուկները նաեւ կասկածանքի տեղիք են տալիս:

ՄԻՍԱԿ ՅՈՐՈՍՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Ջավախք

Банк "НОЙ" принимает краткосрочные и долгосрочные вклады от населения и выплачивает:

за 3 месяца	45 процента
6 месяцев	100 процентов
1 год	300 процентов

Обращаться: гостиница "АНИ", комната 509

☎ 594-509, 565-107.

25.47.58
25.24.63
63.64.06

Կ2-Սերվիս կոոդերատիվը վերակազմավորվել է

«ՀԱՅԿԱԿԱՆ ՇՐԱԳՐԵՐ»

ՍՊԸ-ի

եւ շարունակում է առաջարկել լավագույն հաշվառդահական, գործարար եւ բանկային ծրագրերը ԱԴՀ երկրներում:

Ուշադրություն

ՄԵՆՈՒԱ

«Մենուա» ապահովագրական բաժնետիրական ընկերությունը շարունակում է իրականացնել կյանքի ժամկետային ապահովագրական ծրագիրը

Ընկերության հետ դայմանագիր կնքելով եւ դառնալով ապահովագրական ծրագրի մասնակից, Դուք կարող եք

- ապահովագրել Ձեր կյանքը.
- մասնակցել ընկերության շահույթին եւ ստանալ Ձեր նախընտրած ապահովագրության ժամկետից կախված մինչեւ տարեկան 400 տոկոս երաշխավորված հատուցում.
- ներկայացնել «Մենուա» ընկերության շահերը հատուկ կտրոնների միջոցով եւ վաստակել մեծ գումարներ:

«Մենուա» ընկերությունում Դուք կարող եք ապահովագրել նաեւ Ձեր գույքը. կոմերցիոն խանութների ապրանքանյութական արժեքները գողությունից, կողոպուտից, ավազակային հարձակումից, իսկ Ձեզ հասցրած հնարավոր վնասի հատուցումն առանց քաշքշուկի ստանալ սեղմ ժամկետներում:

«Մենուա» ընկերությունն իրականացնում է նաեւ բեռների ապահովագրություն, դրանց ժամանակավոր դահեստավորում Երեւան քաղաքում եւ հեռագա առաքում:

Ապահովագրության պայմանագիրը կնքելու համար կարող եք Ձեզ մոտ հրավիրել «Մենուա» ընկերության ներկայացուցչին, զանգահարելով 58-09-22, 58-10-22 հեռախոսահամարներով:

«Մենուա» ապահովագրական ընկերության հասցեն է. ք. Երեւան, Երիտասարդական դող. 7 հարկ, սենյակ 702, 716:

digitised by A.R.A.R.@

Կենցաղ

ՊՏՈՒՅՏ ՄԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՎԵՐՈՒՆ ՄԵՋ

Մենք մեր ոչսարավով փորձել ենք ինչ որ չափով ցուցանել մեր այսօրվա հասարակական շերտավորման դասկերը: Երեք տարբեր շերտերի ներկայացուցիչներ՝ տարբեր խնդիրներով ու այդ խնդիրներին ոչ միատեսակ մոտեցմամբ, սակայն որոշ ընդհանուր գծերով՝ բոլորն էլ դժվարությամբ համաձայնեցին խոսել թերթում տպագրվելու համար, հետո՝ բոլորն էլ շեշտեցին, որ այդ մասին գրվելուց ոչինչ էլ չի փոխվի: Զրուցակիցներիս դահանջով ու խնդրանքով ձեռնոցի ենք մնում նրանց անունները նշելուց, քանի որ միայն այդ դայմանավորվածությունը հնարավորություն տվեց խոսակցություն սկսել նրանց աորելակերտի մասին: Ընդ որում անունները չիրաղարակելը զանազան դասճառաբանություններ ուներ՝ ծանոթների շրջադատում «խեղճ ու կրակի» տեսքով չերեւալ, գյուղա-գյուղեցիից առանձին լինելու համար, կամ էլ՝ «իբր գրածիցդ ինչ է լինելու, որ անունս էլ նշես, համ էլ հաչես չունեմ վրաս ավել շուն հաչացնեմ»:



Մեր առաջին խոսակցին «հայցնաբերեցիք» մի փոքր անսովոր դայմաններում մայրամաղամի առայժմ դասարկ բուհերից մեկի մի լսարանում աշակերտի հետ էր դարադում: Դարադմունքի ավարտից հետո, երբ բացատրեցի նդատակս, ինչդես եւ սդասում էի, ավելի շատ տհաճությամբ ընդունեց, քան բարյացկամությամբ: Երբ նրա տուն էինք գնում, ճանադարհին հարցրեցի, թե ինչո՞ւ է մի աշակերտի հետ դարադում, դատասխանեց, թե՝ «հին գայլերը» մեծամասնությանը իրենց մոտ են հավաքել, հետո գներն էլ խրտնեցնող են:

«Երազ»ին 100-ական ռուբլի վճարելով հասանք ծայրամասային բաղամասերից մեկը, որի բազմահարկերից մեկում գտնվում էր նրա բնակարանը: Առաջին բանը, որ զարմացրեց ինձ, այն էր, որ նրա մուտքի դռան տեղ մեծադյա մի բան էր: Իմ զարմանքին արդեն այնքան էլ ոչ երիտասարդ տարիքի երիտասարդ մասնագետը դատասխանեց. «Որոշել էի տունս վերանորոգել, մուտքի համար էլ մեծադյա շրջանակով դուռ դատվիրել: Էն ժամանակ չստացվեց, հիմա էլ մի դուռը 20-30 հազար է դարձել...»:

Բնակարանի 3 սենյակներից խոհանոցն ու մի սենյակն էին վերանորոգված, դատասխանում՝ «1980 թ. գերազանցության դիպլոմով ավարտեցի բուհը, դահեցին ասպիրանտուրայում, սկսեց զրուցակիցս: Երջանիկ աղագայի հույսն ունեի, թե դիսերտացիա կդաշտդանեմ, տուն կստանամ, կդասախոսեմ բուհում, մի խոսքով, կյանքից դժգոհելու այնքան էլ շատ բան չեմ ունենա: Բուհում բնակարանի համար հերթագրել էին, խոստացել որդես երիտասարդ մասնագետի տուն տալ: Երեք տարի առաջ հազիվ տեղավորվեցի (դրա համար էլ մինչեւ հիմա երիտասարդ մասնագետ եմ), էն էլ որ ծանոթ ու մտադիչ մեջ չգցեի, մինչեւ հիմա երեւի Այգեստանում վարձով աորելիս լինեի, ինչդես իմ ընկերներից շատերը: Ճիշտ է, տեղս այնքան էլ հարմար չէ. օրը ամենաքիչը տրանսդորտի վրա 100 ռուբլի եմ ծախսում, բայց դե հո իմ սեփական տուն եմ գնում: Ուր բնակարան ստանալու միակ «օգուտն» այն եղավ, որ ուր ամուսնացա ու երեխա էլ շատ չունենք, 0,5 տարեկան տղաս է: 7000 ռ. աշխատավարձ եմ ստանում, գումարած նաեւ երեխային տրվող նդաստը. նաեւ մի աշակերտի հետ եմ դարադում: Բայց դե գիտեք, դրա համար վճարվող փողը չի երեւում, 20 հազար միանգամից տալիս են ու վերջ... Ծնողներս են տնից օգնում, կնոջս հարազատները խղճում են, իսկ դա այսօրվա դայմաններում ահագին մեծ բան է. օրինակի համար, մի ամսից ավելի էր, երեխայի համար կեր չէին տալիս, դոլիկլինիկայում ասում էին դեռ չենք ստացել: Որոշ խանութներում ասենք կա, բայց դե ես հո չեմ կարող միշտ էդ գներով առնել, կնոջս եղբայրը Վորոնեժ է գնում գալիս, նա մի քանի տոփ բերել է. մինչեւ տեսնենք երբ կբարեհաճեն դոլիկլինիկայից տալ: Հիմա էլ կինս հայրական տանն է, երեխայի հետ. այնտեղ վառարան կա, մեր տունը տեսնում ես ինչ ատոնարան է: Էլեկտրական սալիկների հույսով էինք: Չասես, թե ի վիճակի չենք գոնե մի վառարան առնել: Բայց դե հետո ինչ վառեմ: Ես գուցե վաս հայր եմ, վաս ամուսին, որ չեմ կարողանում փոքրիկիս ու կնոջս համար տաքություն ապահովել: Բայց ես չեմ կարող ծառ կտրելով լավ մարդու որակ ձեռք բերել: Չեմ ուզում արի տեսք ընդունել, բայց գոնե այդ հարցում անմեղ եմ, շեշտեց նա: Իսկ սալյարկայի վառարանի ծախսը. կներեք, բայց իմ գրդանի բանը չի: Գիտես ի՞նչ, ասդեն մի 3 տարի կդինի, որ ես նոր տոր չեմ գնել: Իսկ դատկերացրու, թե ինչ է նշանակում անտոմ տեսքով դատախոս դատոնդի առաջ կանգնած: Փառք աստծո, կինս այնքան էլ դահանջկոտ չէ. հետո՝ երեխայի դատճառով դեռ տնից դիչ է դուրս գալիս, այդքան էլ նոր տոր կարիք չունի, բայց դե հո ամբողջ կյանքում տանը չի՞ նստելու:

... Ուսելիքի համար, քանի դեռ երեխան փոքր է, կնոջս հետ այդ կողմից այնքան էլ չենք դժգոհում: Մի դիչ կտրոններով տված է, կողքից էլ որոշ չափով առնում ենք: Արդեն ասացի, որ ծնողներս էլ օգնում են, բայց, դե, ես չեմ կարող հավերժական ուսանողի կարգավիճակով մնալ, անընդհատ տնից օգնություն ակնկալելով, տանն էլ եղբայր ունեմ, չէ՞:

Այդքան էլ դժգոհ չեմ, չնայած դա չի նշանակում, թե ներկայից խիստ գոհ նստած, սդասում եմ դայծառ աղագայի գալստյանը: Ուղղակի, դժգոհած չդժգոհած, տարբերությունը շատ չէ: Վահան Տերյանի բանաստեղծական տողերից մեկը կարելի է այս ձեւով արտասանել. «Ժուռնալիստներ շատ կգան ու կանցնեն անհետ, խառնաափոր վիճակն այս կմնա մեզ հետ»: Դուք էլ կգրեք, կկարդան, թեեւ բոլորն էլ գիտեն ինչն ինչոց է: Մտավորական ենք, բայց կարծես թե միայն մտովի կամ էլ մտացածին»:

— Երբ ցանկացանք Երեւանի մթերային խանութներից մեկի վարիչի հետ խոսակցության փորձ ձեռնարկել, նա նախ թե՝ «Դարդ ու ցավդ կտրվել է՞, ինչի հետեւից ես ընկել», ապա բանակցելուց հետո, մտանվանդ երբ «ժելեզնի» խոսք տվեցի, որ տվյալները չեն հրատարակվի նրա մեքենայով հասանք «վարիչական» երկհարկանի տուն: Հյուրասենյակում բարից կոնյակ հանեց ու տոկոզադատոփի կողքը տեղավորվելով (ավելի «ծավալուն» հյուրասիրությունից հրաժարվեցինք, չնայած դատելով առաջին տղավորությունից, դրա լայն հնարավորություններ կային) դատրաստվեց «ինտերվյուի». մի անգամ եւս շեշտելով, որ անուն չնշվի: Այնուամենայնիվ, նա ոչ մի գաղտնիքի բացահայտում էլ թերեւս չարեց. «Հիմա որ ասեմ, թե խանութից օգուտ չունեմ, սուտ կլինի: Ու որ խանութի վարիչն էլ նման բան ասի, չհավատաք: Հեչ որ բան չլինի, «տալոնի» ադրանքներից տակը մնում է, դա կա ու կա: Ասենք, մի տեղից ադրանք ենք ստանում, իմ փայը՝ կա առանձին, ես խանութում չլինեմ էլ: Իմ կարծիքով, տրանով ինչ-որ բացահայտում չեմ անում:

... Ուսելիքի ու հագնելիքի մասին չեմ ուզում շատ խոսել, եթե իմ խանութում (նկատի ունեցեք, հարգելի ընթերցողներ, որ խանութը դետական է. -Գ. Ն.) չլինի էլ, զանգում եմ ուրիշ խանութների վարիչների, մի խոսքով, ճարվում է: Է, դա չլինի էլ, ինչ է, չե՞մ կարող, էդքան կոմխիռն կա, մի տեղից առնեմ:

Որ ունեմ, ինչի չծախսեմ: Հիմա ես չեմ, դու ես, որ ունենաս չես ծախսի՞: Ինչի՞, ուտողներն ինձանից լավն ե՞ն: Չեմ ասում չունեմ, համ էլ ասեմ էլ. մեկ է կարդացողը չի հավատա, որովհետեւ անդայման կմտածի, թե ոնց կլինի, խանութի վարիչ է՝ փող չունի՞: Էն որ Արամ Ասատրյանը չգիտեմ որ թերթում հարցազրույց էր տվել, հարցրել էին ճիշտ ա՞, որ «Մերսեդես» ու «24» ունես, ասել էր՝ չէ, մի «ժիգուլի» ունեմ, գիտեք ճի՞շտ էր ասել:

Ունեմ, չեմ ուրանում, ադրանքի միջոց ունեմ: Աշխատավարձի 5-6 հազարով յոլա գնալ չի լինի, դա փաստ է: Բայց դե ես ամեն ամիս ամենաքիչը 100 հազար ունեմ: Չկարծեք, թե տեղս նստած փողը գալիս է: Խանութում որ ադրանք ենք բերում, հո օդից չի: Բազմում փող, ավտոյին փող, կամ եթե դրսում գործարք ենք կատարում (էդ էլ խաղադղար մի դատկերացրեք), ինչքան ծախս ենք անում դրա համար: Բայց դե նորից եմ ասում, օգուտ ունեմ: Անում եմ, որ չունենամ, ինչի՞ եմ տանջվում:

Քանի կարող եմ, երեխաներիս դե՞տք է դահեմ, ադահովեմ: Ո՞ր ես չանեմ, ո՞վ է իմ երեխաների մասին մտածելու: Որ հնարավորություն ունեմ, ինչո՞ւ սայլարկի վառարան չգնեմ, որ տաք լինի. ակումբատրով տունս լույս չխաեմ:

Էդդես ամեն ինչ ասում եմ, որովհետեւ չասեմ էլ, այդդես են մտածելու: Հետո էլ մենք դայմանավորվել ենք: Ինձ թվում է, հակառակ դեդքում դժվար չէ «Ազգ»ի խմբագրությունը գտնել»:

Երեւանի չաշխատող գործարաններից մեկի մուտքի մոտ սդասեցինք, մինչեւ որ մեկը միայնակ դուրս գար:

Մեր բախտն այնքան էլ չբերեց. դատկերացնում եք, թերեւս, ինչքան տհաճ բան է աշխատանքից բեկուզեւ ժամանակավորապես զրկված, կես աշխատավարձ ստացող ու գուցե նաեւ դրանից չարացող մարդուն խնդրել, որ նա ծանոթացնի իր աորելակերտին, այն էլ թերթում տղվելու համար: Այսդես թե այնդես, մենք կարողացանք հյուրընկալվել նրա տանը: Երկսենյականոց, համեստ կահավորված, բավականին լավ վերանորոգված բնակարան էր, ցուրտ եղանակին բնորոշ «դլիտաներով» ու վառարանով. «Չնստածեք, թե երկու կողեկ փող են տալիս, դրանով եմ այսքան բան արել: Ուր է թե հնարավոր լիներ: Գործարանից բան-ման եմ բերում, որն ինձ դեսք է՝ դահում եմ, մնացածն էլ՝ ուզող շատ կա: Կամ էլ գործի տեղը հաստոցի վրա մի երկու մասնավոր գործ եմ անում, էդ էլ կողքից բան ա»:

«... Ասում ես, ոնց ենք ադրում, եռ հիմնարկը որ չաշխատի, ո՞նց կլինես: Ասենք, անընդհատ հոդված գրես, բայց թերթը չտղվի, ինչո՞վ դլիտի ադրես: Դեռ հետն էլ երկու ուսանող աղջիկ դահես, վաղը, մյուս օրն էլ ամուսնացնելու ժամանակն է: Չեմ ասում, թե ադրատության դուռն եմ հասել, բայց դե սա ադրել չի, որ մենք ադրում ենք:

Քանի դեռ հիմնարկը չի աշխատում, կոոդերատիվում գործի եմ մտել, մեկ-մեկ էլ, եթե մասնավոր գործ է լինում, դրանով եմ զբաղվում: Լավ է, գոնե կինս աշխատում է:

... Էս վառարանին ինչո՞ւ ես զարմացած նայում: Փայտ ենք վառում, հա: Որտեղի՞ց ենք ձեռք բերում: Ամբողջ քաղաքը որ փայտ է վառում, որտեղի՞ց է: Ինչ անենք, թե փոքր երեխա չունենք, հո չե՞նք սառելու: Ի՞նչ է, ով որ վառարան ունի, ուրեմն փոքր երեխա էլ ունի՞: Համ կարգին հաց չտանք, համ էլ սառե՞նք:

Մի քանի գրամ բան ոլիտի տան, էն էլ դամ տալոնը չկա, կամ էլ ադրանք դեռ չի եկել: Քանի ա՝ դեռ է 1 կիլո կարագ են խոստացել, դեռ գալիս է:

Բա փ[illegible] մեզ աշխատավարձ չեն տալիս, թե ինչ է չենք աշխատում (էն տված կես աշխատավարձը չեղածի հաշիվ է), իբր աշխատած ժամանակ ճիշտ օրն են տալիս: Դատկերացրու, ինչ կլինի վիճակդ, երբ 3 ամիս աշխատավարձ չստանաս կամ կեսը ստանաս, ու մնես խանութ տեսնես գրած երեքնոց-հինգնոցներով առեւտուր չենք անում: Մի օր կնոջս հետ (աշխատավարձ էին տվել ռուբլիանոցներով, երեքնոց-հինգնոցներով) գնացինք կարագ առնելու, ամբողջ խանութի մարդկանց ու որ առավել ամոթալի է, կնոջս ներկայությամբ վաճառողը ինձ խայտառակ դրության մեջ գցեց, երբ ես նրան երեքանոցներ ու ռուբլիանոցներ տվեցի, ու նա հրաժարվեց վերցնել, մեծ փողեր դահանջելով: Ի՞նչ անեմ, փող տղե՞մ: Քիչ չէ 1500-ով կիլոգրամը կարագ ենք առնում, դեռ դիտի այնդես անենք, որ տված փողը վաճառողին հաճելի լինի:

Լավ, կարագն էլ առանք, բա էս աղջիկ-երեխեք են, դասի են գնում, մարդամեջ են դուրս գալիս, նրանց հագցնել է դեսք, իսկ 10 հազարից դակաս գնով շոր չկա, մի քանի հազար էլ կոշիկն արժի, չհաշված օծանելիքն ու արդուզարդի մյուս միջոցները: Ինչ անեմ, ոնց չառնեմ, իսկ որ չկա, որտեղի՞ց առնեմ: Հիմա մի տեղ դահակի գործ են խոստացել, սփոփված դեսք է գնամ, թե չէ մի տեղ աշխատելով, էն էլ կիսաս-դոսաս աշխատելով, բան դուրս չի գա»:

Մենք դիտավորյալ խուսափեցինք ծավալվել մեր զրուցակիցների քննադատությունների մեջ՝ առկա բարեւի ու ներկա իշխանությունների նկատմամբ, որովհետեւ մեր նդատակը չէր իշխանությունների հասցեին քննադատական արտահայտությունների դատճառ հավաքել:

Կարծում ենք, որ վերոբերյալը ավելի բնորոշ ու արտահայտիչ է մեր կայացնում մեր հասարակության այսօրը:

ՍՍԳԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

• STUDY IN THE USA •

The United States Embassy, World Learning Incorporated and the Ministry of Education of the Republic of Armenia are pleased to announce a scholarship program to send thirty-two Armenian secondary students to the United States for one year.

Description of Program.

Students will be selected by World Learning Inc. They will live with American families and study in the United States for one year, from August 1993 until July 1994. Travel and living expenses will be paid by the United States Government.

Who is Eligible.

Students who speak exceptionally good English, who will be in the eight or ninth form of secondary school, as of March 26, 1993.

How to Apply.

Interested students should write in English the following information:

NAME
DATE OF BIRTH
FORM
SCHOOL
ADDRESS OF SCHOOL
TELEPHONE (IF WORKING)

Applicants should write a short essay on the following subject:

Describe yourself, your interests, and why you want to study in the United States.

The essay should be no longer than two pages.

Deadline for Application

The essay, in a sealed envelope, should be brought to the U.S. Embassy, Bagramyan Avenue number 18, no later than 6:00 p.m. on Monday, March 22, 1993.

Finalists will be announced on April 2. A list will be posted at the American Embassy. Finalists will be interviewed by a representative of World Learning Incorporated, who will make the final decision.

digitised by A.R.A.R.@

ԱՐՄԵՆՊՐԵՍ
ARMENPRESS State Newsagency

Միջազգային անցուդարձ

ՄՈՍԿՎԱՅԻ «ՉԵՉԵՆԱԿԱՆ» ՄԱՖԻԱՆ

Սասնագեն հրեագեսների ոնդմամբ, նախկին Միության մայրաքաղաքը կանգնած է մաֆիական ոլաբերազմի շեմին:

Հայրենական կազմակերոված հանցագործության ղեկավարներից մեկին Յաոոնչիկ մականվամբ «օրենքով գողին» սիբիրյան բանտից վաղաժամկես ազաս արձակելուց հետո, Մոսկվայում կտրուկ աճխուժացավ այսոեես կոչված սլավոնական խմբավորումների գործունեությունը, որոնք սկսեցին նեղել կովկասցի գաստրոլյորներին: Մոսկվայի գանգստերներն առանձնապես կտրուկ ձեռնամուխ եղան «չեչենական» մաֆիայի դեմ ոլայքարին:

... Մոսկվայում հանցավոր խմբավորումների ազդեցության ոլորտների բաժանումը սկսվել է դեռևս 1988 թվականին: Մինչ այդ ոլահը իրեն «չեչենական համայնք» անվանող հանցախմբի ոլարագլուխները (թեպետ դրա կազմում բաս ազգություններ ներկայացուցիչներ կան), մի շարք ահաբեկող եւ մանրակրկիտ ծրագրված գործողություններ ձեռնարկելով բացարձակ վերահսկողություն հաստատեցին «Ավտոմեքենաներ» խանութի վրա: Յուժնի ոլորտում գործարքներով զբաղվող բոլոր ոլոֆեսիոնալ սպեկուլյանտներն ու խաղախամողները՝ «կիլոալները», սկսեցին «տարֆ» վճարել յուրաքանչյուր վաճառված մեքենայի համար:

Այսօր չեչենական մաֆիան, որը մայրաքաղաքում ունի մինչեւ 1,5 հազար գործող գրոհայիններ (գաստրոլյորների հետ միասին նրանց թիվը հասնում է շուրջ երեք հազարի), բաժանվում են երեք խմբավորման, որոնցից յուրաքանչյուրն ունի իր շահերը, ազդեցության ոլորտները, հասակ կառուցվածքը՝ ոլարագլուխ, գրոհայիններ, գանձապահներ:

Ամենահզորը կենտրոնականն է, որը վերահսկում է դեֆիցիտ ապրանքների վաճառքի բոլոր գործառնությունները, Մոսկվայի շուկաները, անառակուհիներին, արվամոլներին, ռեստորաններն ու առեւտրական կողակների մեծ մասը:

Մեկ այլ խմբավորում «Օսանկինյանը» (Մոսկվայի այդ շրջանի անունով, որտեղ «չեչենական համայնքի» գանգստերները «զինագրավեք են» տեղի «Զարյա», «Բայկալ», «Վոսխոդ», «Օսանկինսկայա» հյուրանոցները) մասնագիտանում է խոշոր քանակությամբ կահույքի, մթերքի, շինանյութերի, լաստենիկայի վերավաճառքի մեջ:

Եւ վերջապես, ավտոմոբիլային ոլեի ավանդներ ունի ներդրված բանկերում:

Հանցախմբի գործության մասին են վկայում նաեւ «չեչենների» վերջերս դատապարտված այլ ոլարագլուխների՝ Խոջա Նուխաեւի, Ռուսլան Ալլանտիրիեւի եւ Գենա Լոբժանիձեի ճակատագրերը: Սանալով խիստ ռեժիմի ոլր տարվա ոլատժաչափ, նրանք երկար չմնացին կալանքի տակ: Անցյալ տարվա սկզբին նրանցից երկուսը կեղծ փաստաթղթերով տեղափոխվեցին հայրենի Չեչնիա եւ նեղկայումս ամոր-փառոր ապրում են Գրոզնիում: Մոսկվայի հետախուզական վարչության խուզարկուների տվյալներով, նրանք շարունակում են հեռախոսով ղեկավարել Մոսկվայի իրենց գրոհայիններին: Իսկ մինչ հեղինակությունը ավանդներ ունի ներդրված բանկերում:

Հանցախմբի գործության մասին են վկայում նաեւ «չեչենների» վերջերս դատապարտված այլ ոլարագլուխների՝ Խոջա Նուխաեւի, Ռուսլան Ալլանտիրիեւի եւ Գենա Լոբժանիձեի ճակատագրերը: Սանալով խիստ ռեժիմի ոլր տարվա ոլատժաչափ, նրանք երկար չմնացին կալանքի տակ: Անցյալ տարվա սկզբին նրանցից երկուսը կեղծ փաստաթղթերով տեղափոխվեցին հայրենի Չեչնիա եւ նեղկայումս ամոր-փառոր ապրում են Գրոզնիում: Մոսկվայի հետախուզական վարչության խուզարկուների տվյալներով, նրանք շարունակում են հեռախոսով ղեկավարել Մոսկվայի իրենց գրոհայիններին: Իսկ մինչ հեղինակությունը

եւ Յուժնի ոլորտի խմբավորումը, որից սկսվեց ոլատմությունը: Բացի «Ավտոմեքենաներ» խանութից, այն վերահսկում է բազմաթիվ համատեղ ձեռնարկություններ, որոնք զբաղված են Ռուսաստանի շուկայում օտարերկրյա մակնիշի մեքենաների վաճառքով: Եկամտի մի աղբյուրն էլ Արեւմուտքից գողացված ավտոմեքենաները երկիր տեղափոխելն է:

Այդ խմբի ոլարագլուխ Նիկոլայ Սուլեյմանովը, որի մականունը Ռուսլան է, այժմ ձերբակալված է մի համատեղ ձեռնարկության տնօրենից 25 միլիոն ռուբլի շորթելու մեղադրանքով: Հետաքննության ընթացքում բացահայտվեցին փաստեր, որոնք միանշանակ վկայում են, որ «չեչենական համայնքին» օգնություն են ցույց տալիս այս աշխարհի հզորները: Այսոեես, Մոսկվայի ներքին գործերի գլխավոր վարչության կազմակերոված հանցագործության գծով շրջանային վարչության աշխատակիցները տվյալներ ունեն Սուլեյմանովի երեսկան գործի ընթացքին նախկին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամ, ԽՍՀՄ-ժողովրդական արտիստ Մահմուդ Էսամբաեւի բազմակի միջամտության մասին: Ունենալով նման հովանավոր, Ռուսլանը վստահ է, որ դատավարություն չի լինի, եւ մոտ ժամանակներս իմն ազաս կարձակվի ու մշտական բնակության կմեկնի Արեւմտյան Եվրոպա, որտեղ ոլատկանակն աշխատում էր այս նյութի վրա, հովանավորներն այդ ընթացքում հասան նրանց ոլատժաչափերի վերացմանը օրինական հիմունքներով:

«Մեծ» մարդկանց շահերի հետեւում էլ մեծ փողեր են բաշխված: «Չեչենական համայնքի մոսկովյան խմբավորումներն ունեն իրենց գողական «գանձանակը» եւ սեւ դրամարկղը: Այստեղից փողեր են հատկացվում դատապարտյալների տղաստարկումների դիմաց վճարելու, միլիցիայի եւ դեսանվտանգության ուսապիչներով, իրավակենտրոն, ֆինիշերին եւ դատավորներին կաշառելու, կալանավորների բնատիպներին աջակցելու, փախուստներ եւ «վաղաժամկետ» ազատումներ կազմակերոելու համար: Մի քանի միլիոն ռուբլու կաշառքը սովորական բան է: Իսկ թե ինչքան դրամ կա ընդհանրապես «գանձանակում», ոչ ոք հանձն չի առնում ճշգրիտ կանխագուշակել: Խոսքը հավանաբար հարյուր միլիոնավոր, գուցե եւ միլիարդավոր ռուբլիների մասին է:

«Չեչենական» հարցաշրջանին միլիարդավոր եկամուտներ ոլեսք է բերեր զուտ ոլատահականորեն ձախողված ահեղի խաղախությունը կազմված վարկային ծանուցագրերի ավիգոնների դրամը հետագայում ստանալու երաշխավորագրերի հետ:

Խաղախությունն իրավաղահ մարիններին հայտնի է դարձել զուտ ոլատահականորեն: Պետրովկա փողոցում թիվ 17 տան մոտ կալանվել էին մի խումբ չեչեններ, որոնք մեքենա էին բարձում բանկի փաթեթավորմամբ դրամով լի ոլարկեր: Երբ սկսեցին հետաքննել այդ գործի հետագա հանգամանքները, ոլարզվեց, որ «կանխիկը» Մոսկվայի բանկերում ստացվել էր կեղծ փաստաթղթերով, դրա վրա դրված էր Գրոզնու բանկի կեղծված կնիքը: Ցավոք, չէին կասեցվել մյուս հանանման խաղախությունները, որոնց ընդհանուր գումարը, ըստ ֆինչական խմբի գնահատականների, հասնում է 30 միլիարդի: Այդ գումարների մեծ մասը փոխարկվել է եւ «նստել» արտասահմանյան հաշիվներում: Մի շարք կեղծ դրամների հիման վրա վճարային անկանխիկ գործառնություններ էին կատարվել եւ գնվել օտարերկրյա մակնիշի մեքենաներ, դեֆիցիտ ապրանք, թանկարժեք իրեր:

Թեեւ ֆինիշերը եռանդագին համոզում էին, թե չի կարելի այդ գործի մասին խոսել որպես «չեչենականի», քանի որ վճարման կեղծ փաստաթղթեր են սկսել ստացվել Մոսկվայի բանկերում նաեւ տրոհված տերության ուրիշ անկյուններից, իսկ կեղծված ավիգոնների ոլատրաստման տոյարանները հավանաբար գտնվում են մայրաքաղաքում, չի կարելի ժխտել այն փաստը, որ նշանակալից գումարներ «արտահոսել են», իսկ ավելի ճիշտ՝ փոխադրվել հենց Չեչնիա: «Դրամափոխադրիչների» ոլահապանների եւ լայնածավալ հանցագործության փոխկապակցողների թվում հիշ չեն Մոսկվայի «չեչենական» հանցաբաշխարհի անդամները:

Իսկ այս դեպքում «ո՞ւր են նայում» այսոեես կոչված սլավոնական հանցավոր խմբավորումները: «Ջուտ մոսկովյան հանցախմբերը» միավորվելով, ամեն ջանք գործադրում են, որպեսզի «չեչեններին» դուրս մղեն մայրաքաղաքից: Մոսկվայի ներքին գործերի վարչության տվյալներով, միայն անցյալ տարի երկոռասակիչ գոտեմարտերում զոհվել է համայնքի յոթ գրոհային: Այդ թիվը կարող էր եւ ավելի բարձր լինել, բայց շատ դեպքերում «հաշիվներ մաքրելը» ժամանակին կասեցվում էր միլիցիայի աշխատակիցների կողմից: Այսոեես, օրինակ, անցյալ տարի Ստուդենչեսկայա փողոցում կալանվել էին մոտ 30 զինաթափված մարդիկ, որոնք ոլատրաստ էին կրակել միմյանց վրա: «Հանցախմբերի ոլատերազմն» արդեն հիշ զոհեր չի տվել:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ճապոնիա

Ավտոմոբիլագործներն ուզում են կրճատել ոլատինի ներմուծումը

Ճապոնական ավտոմոբիլների վաճառքի նվազման կապակցությամբ ենթադրվում է 1993 թվականին կրճատել մեքենաների արտադրության համար անհրաժեշտ ոլատինի խմբի մետաղների գնումները, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով Ճապոնիայի արդյունաբերական շրջանները: Որոշ ընկերություններ նույնիսկ մտադրում են վաճառել իրենց ոլահեստներում կուտակված ոլատինային մետաղների մի մասը, որպեսզի նվազեցնեն ծախսերը: Ճապոնիայում ավտոմոբիլների վաճառքը, բացառությամբ փոքր մեքենաների, 1992 թվականին նվազեց երկրորդ տարին անընդմեջ, կազմելով 5,33 միլիոն հատ, որը նախորդ տարվանից 7,2 տոկոսով ոլակաս է:

Կարծում են, որ գնորդների զգուշավորությունը կարող է ոլայմանավորել հատկապես ոլատինի եւ ռոդիումի գների նվազման միտման գերիշխումը: Ավտոմոբիլային ընկերություններին է ընկնում Ճապոնիայում ռոդիումի ներմուծման 80 տոկոսը (1992 թ. 2,2 տոննա 1991-ի 3,5-ի դիմաց), ոլատինի 20 տոկոսը (57,5 տոննա 69,8-ի դիմաց) եւ ոլալադիումի 10 տոկոսը (62,1 տոննա 65,0-ի դիմաց):

Արտադրության անկումը ավտոմոբիլաշինարաններին ստիպում է վերանայել իրենց ներմուծական ոլահանջմունքները: Օրինակ, «Նիսան» ֆիրման «Այմազուվելիրէմպորտ»-ի հետ 1993 թ. հունվար-մարտին Ռուսաստանից ոլատինի խմբի մետաղների ներմուծման առեւ ոլայմանագիր չի կնքել: Ինչպես ակնկալվում է, հիշյալ արտաքին առեւտրական միավորման ներկայացուցիչը ս.թ. մարտին Ճապոնիա կայցելի եւ բանակցություններ կվարի նոր ոլայմանագրերի կնքման շուրջը, այդ թվում ավտոմոբիլաշինական ընկերությունների հետ:

«Տոյոտա» ընկերության ներկայացուցիչը հայտարարեց, թե ամիսներ շարունակ հիմնական մտահոգությունը եղել է Ռուսաստանում ոլատինի խմբի մետաղների արտահանվելիք ոլաշարների կրճատումը, բայց դա փաստորեն չանդրադարձավ Ֆիրմայի գործունեության վրա, որը դադարել է հիշյալ հումքը գնել արտասահմանում եւ օգտագործում է ոլահեստավորված մետաղը:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ

ԱՄՆ

«Ֆրիդրմ» տիեզերական ուղեծրակայանի նոր նախագիծ

Սոիտակ տունը ԱՄՆ-ի օդագնացության եւ տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչությանը (NASA) գուցում է տվել ամենատեղ ժամկետներում վերանայել «Ֆրիդրմ» ուղեծրակայանի կառուցման նախագիծը: Ինչպես վերջին համարում հաղորդել է ԱՄՆ-ի օդատիեզերական արդյունաբերության բարաբահանդես «Ավիեյշն ուիք ընդ սպեյս թեքնոլոջի»-ն, վարչակազմը կոչ է անում կրճատել այդ բանկարժեք նախագծի իրագործման նախատեսված ծախսերը, իսկ ազատված միջոցները փոխանցել NASA-ի արտերկրային հետազոտությունների յուրացման ուրիշ ծրագրերի:

1994 ֆինանսական տարում նախագահ մտադիր է NASA-ի կարիքներին հատկացնել ընդհանուր առմամբ 14,7 միլիարդ դոլար, որը 6 միլիոնով ավելի է այս տարվանից, նշում է բարաբահանդեսը: Այդ գումարից «Ֆրիդրմ»-ի ստեղծման նախագծին կհատկացվի 2,3 մլրդ դոլար եւ ոչ թե տիեզերական գերատեսչության ակնկալած 2,5 միլիարդը: Նոր վարչակազմի բյուջետային հատկացումների ծրագրերը միանգամայն գոհացնում են NASA-ի տնօրեն Դենիել Գոլդինին, որը հանդես եկավ հայտարարելով, որ հատկացված միջոցները կոնգրեսի հաստատման դեպքում «միանգամայն բավարար կլինեն «Ֆրիդրմ» նախագծի շրջանակներում գիտական մշակումներ շարունակելու համար»:

1984 թ. նախագահ Ռոնալդ Ռեյգանի կողմից «Ֆրիդրմ» տիեզերական կայանի ստեղծման հայտարարությունից ի վեր դրա վրա արդեն ծախսվել է 8 միլիարդ դոլար, այդ նախագծի վրա երկրի 37 նահանգներում աշխատում են 75 հազար մասնագետներ ու բանվորներ: NASA-ն հույս ուներ մինչեւ 2000 թվականը կայանը ուղեծիր դուրս բերել 4 աստղագնացներից բաղկացած անձնակազմով եւ հավաքման աշխատանքներն ավարտել բաց տիեզերքում 1996 թ.: Դրա հետ մեկտեղ կայանի նախագծի նախկին ֆինանսավորման շարունակման կողմնակիցներն ընդգծում են, որ այն ոչ միայն կաղախովի մոտ 130 հազար ամերիկացի մասնագետների աշխատանքը, այլեւ երկրին թույլ կտա առաջատար դիրքեր ոլահոլանել տիեզերքում:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Բիզնես

«Քոնֆերենս բորդ»-ը ամերիկյան ընկերությունների բարեգործության մասին

Վերջին տասնամյակում արտասահմանում բարեգործության նպատակով ամերիկյան ընկերությունների մուծումները ավելացել են ավելի քան 5 անգամ: Այդ են վկայում հեղինակավոր «Քոնֆերենս բորդ» մասնավոր տնտեսագիտական կազմակերպության հաշվարկները: Այդ միջոցները հատկացվել են կրթության, առողջապահության զարգացմանը, մշակույթի եւ արվեստի օժանդակմանը, բաղաքացիական իրավունքների ոլաշտպանությանը եւ ծախսվել են հիմնականում Արեւմտյան Եվրոպայում ու Կանադայում:

Հաշվարկները հիմնված են ԱՄՆ-ի 1000 խոշորագույն ընկերությունների կազմի մեջ մտնող մոտ 200 կորպորացիաների բարեգործական գործունեության վրա: Մասնահումները կատարվել են ինչպես դրանց ամերիկյան կենտրոնակայանների, այնպես էլ (ոլակաս չափով) արտասահմանյան մասնաճյուղերի կողմից:

«Արտասահմանում միջոցների բաշխման հիմնական ոլատճառն այն է, որ կորպորացիաների եկամուտների ու շահույթների ավելի ու ավելի մեծ մասն ստացվում է հանրաոլետական գործառնություններից», ոլարզաբանեց «Քոնֆերենս բորդ»-ի ներկայացուցիչ Էնն Քլեոերը: Բացի դրանից, նման ծախսերը համապատասխանում են կորպորացիաների ռազմավարական ծրագրերին, քանի որ բարձրացնում են նրանց վարկը, ինչպես նաեւ բարելավում փոխհարաբերությունները թե կառավարությունների եւ թե հասարակության հետ: Արդեն իսկ այդ ոլատճառով, ընդգծեց Էնն Քլեոերը, կարելի է ակնկալել աղագայում եւս արտասահմանում բարեգործական ծախսերի աճ: Միեւնույն ժամանակ արտասահմանյան բարեգործությունը դարձյալ կազմում է բուն Միացյալ Նահանգներում այդ նպատակով ծախսվող միջոցների լոկ աննշան մասը:

Կազմակերպությունը նշում է, որ բացի հատկապես խոշոր նվիրատվություններից, արտասահմանում բարեգործության նպատակով միջոցների օգտագործման մասին իմնուրույնաբար որոշումներ են ընդունում ամերիկյան կորպորացիաների մասնաճյուղերը, քանի որ դրանք «գտնվում են տեղում եւ ծանոթ են տեղական խնդիրներին»:

«Քոնֆերենս բորդ»-ի հաղորդումից ոլարզ է դառնում, որ Արեւմտյան Եվրոպայում եւ Կանադայում շեշտը բարեգործության վրա դնելը հիմնավորված է երկու գործոններով այդ շրջաններում ամերիկյան կորպորացիաների զգալի ներկայությամբ եւ դրանցում այնպիսի ենթակառուցվածքի՝ առկայությամբ, որը թույլ է տալիս հատկացվող միջոցներն արդյունավետորեն օգտագործել ըստ նշանակության: Մյուս վայրերում բարեգործությունը հզոր խոչընդոտներ է բախվում ի դեմս ոլարկեսների եւ կամավորական ծրագրերի բացակայության: «Որքան սուր են երկրի կարիքները, այնքան դժվար է այնտեղ գտնել ներգործուն կառույցներ, որոնք թույլ կտային միջոցներն արդյունավետորեն օգտագործել ծրագրերի իրականացման նպատակով», ափսոսանքով արձանագրում է կազմակերպությունը:

Հաղորդման մեջ չեն նշվում արտասահմանում բարեգործության նպատակով ծախսվող միջոցների ընդհանուր գումարները:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Հայտարարություն

Հայտնվում է, որ Երեւանի ոլեսական համալսարանում ոլարաոմները կսկսվեն մարտի 15-ից, ժամը 9:00-ին:

Ռեկտորատ

digitised by A.R.A.R.@

Խոսք

Ի ՀԵՃՈՒԿՍ ՄՈԼԼԱՆԵՐԻ

«Չնայած «մշակութային հակահարձակմանը» եւ հեղափոխության 14-րդ տարեդարձի տոնակատարությանը, Թեհրանի իշխանություններն արդեն զգում են ժողովրդի դժգոհությունը: Գրաֆֆիչներն այլեւս չեն կարողանում ոգելից խմիչքի կամ տեսաժապավենների առաջն առնել: Ժառանգորդի բացակայության պայմաններում Խոմեյնիի մտահղացած ամբողջական իսլամը շնչահեղձ է լինում»: Այսպես է գրում ֆրանսիական «L'Express» շաբաթաթերթ դեսն իր այս տարվա փետրվարի 24-ի համարում:

Թեհրանի կենտրոնում նորաձեւության խանութներից մեկի ցուցափեղկի առջեւ ոտից գլուխ սեւ «հիջաբ» իսլամական տարազ հագած մի խումբ պարմանուհիներ են հավաքվել: Նրանք նայում են նորաձեւ հագուստներին եւ զարմանում իրենց ծիծաղը: «Եթե ես սա հագնեմ փողոցում, ինձ անմիջապես կբանտարկեն», ըմբշում է կանանցից մի ուսանողուհի, մատնանշելով չափազանց վառ գույներով մի զգեստ: Գեղեցկուհիներ, որոնց մոտ 100 խրատական պատկերներ են փակցված, խումբն էլ ավելի է լրջանում: Նկարաշարը նվիրված է «Եվրոպայում կանանց հանդեպ գործադրվող բռնությանը»: Լուսանկարներն առնված են ֆիլմերից եւ դատապարտում են Արեւմուտքի պոռնկացված բարքերը: «Մեր հեղափոխությունը եղել եւ մնում է մշակութային հեղափոխություն», հայտարարում է նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին: Մարտի 21-ին սկսվող իսլամական 1372 թվականին մոլլաների Իրանը իր բյուջեի մեկ տոկոսը կհատկացնի «ամբարտավանության մշակութային ներխուժման դեմ մղվող պայքարին»: Պարզ է, որ խոսքն Արեւմուտքի մասին է: Անցյալ տարվա հունիսին հանրաքվեի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեիի վերսկսած հարձակման հետեւանքով պաշտոնազրկվեց մշակույթի եւ իսլամական կողմնորոշման «ազատական» նախարար Մուհամեդ Խաթամին, որը իմն էլ մոլլա է, սակայն արմատական մամուլի թիրախներից մեկը: Իհարկե, սպորտը արգելված չէ: Թեհրանից հյուսիս գտնվող բարձր լեռնային հանգրվաններում տղամարդիկ եւ կանայք դահուկներով սահում են տարբեր վագրուղիներով: Նախկին բազավորական գրֆակումբում, որն այժմ կոչվում է «հեղափոխական», տղամարդիկ եւ կանայք խաղալու են գալիս տարբեր օրերի: Իսմամ Խոմեյնին իր կենդանության օրոք վերացրեց երաժշտության վրա դրված արգելքը: Սակայն իսլամական բարոյության ազդեցիկ կազմակերպությունը դասական երաժշտության նվագախմբերին արգելում է ելույթ ունենալ արբազան Ղոմ քաղաքում: Մասնավոր երեկույթների ժամանակ կարելի է հանդիպել դոնփակ պայմաններում Մոցարտ նվագելուց հուսահատված ջութակահարների կամ խիստ գրաֆֆիչների հետ առճակատման մեջ մտած կինոգործիչների: Օրինակ, Թեհմինե Միլանին ուր անգամ վերափոխել է իր առաջին լիամետրաժ ֆիլմի սցենարը:

Օրենքով արգելված ոգելից խմիչքը եւ տեսաժապավենները վաճառվում են գաղտնաբար: Ակումբներն փոխանակում են իրենց ունեցածը: Միջնորդները վարձով առաջարկում են դասական, մելոդրամատիկ ֆիլմեր, ֆունգ ֆու եւ երբեմն նույնիսկ պոռնոգրաֆիկ ֆիլմեր: Պաշտամունքներից մեկի՞ կարծիքով, երկրում կա 3 միլիոն տեսագրիչ, այսինքն 20 իրանցուն ընկնում է մեկ այդպիսի սարք: Իշխանություններն այլեւս չեն փորձում լրջորեն պայքարել տեսաժապավենների դեմ. հայտնվել է մեկ ուրիշ, էլ ավելի կործանարար համարվող վտանգ: Բանն այն է, որ Արաբական արաբական մոտ ժամանակներս ամբողջ երկիրը կիեղեղի իր քայքայիչ ծրագրերով: Եւ արդեն սկսվել է պարբոլիկ անտենաների գաղտնի վաճառքը:

Բարոյականության դոգմաների պահապանները նախկին եռանդով գործում են ինչպես փողոցներում, այնպես էլ բերքերի էջերում: Թեհրանում առկա են ասես երկու տարբեր Իրաններ: Քաղաքի հարավում գտնվում են «մոսաջահիդների» (ընչազուրկների) հյուղակները, ցեխոտ փողոցները, աղբում են իրանա-իրաքյան պատերազմի խեղանդամված մասնակիցները, բոլոր կանայք չադրաներով են: Քաղաքի հյուսիսում առկա են շքեղ առանձնատներ եւ ավտոմեքենաներ: Այնտեղ է կոմիտեների, բարերի բրիգադների գործունեության հիմնական ասպարեզը, որոնց գլխավորում են փաստաբանները (հեղափոխության պահապանները): Մութն ընկնելուն պես նրանք շրջում են բաղամասերում, փնտրելով այն վայրերը, որտեղ հարուստները հարբում են կամ մասսայական զբաղվում, անվայելուչ հագուստներ հագնում կամ թմրադեղեր օգտագործում: Նրանք որոնում են «արբաղիղ» երաժշտության ժապավենները, չամուսնացածների զույգեր եւ անվայել վարքագծի դրսեւորումներ: Կանանց չափազանց բարձր կրունկները, անգլերեն մակագրություն կրող պայուսակը կարող են մեկից մինչեւ հինգ օրվա բանտարկության պատճառ դառնալ:

«Մշակութային հակահարձակումը նոր իրավունքներ է տալիս իրանյան պատերազմի կամավորների ընչազուրկ հետնորդներին բասիջիներին: Իրենց կոչումով եւ Անվերապահ հավատարմությամբ հայտնի այս մարտիկներին օրենքը հասկացնում է համարյա աշխարհի տեղերի 40 տոկոսը: Վարչակարգն ավելի քան երբեւէ շփացնում է հավատարիմ հոգատարներին: 1992 թ. գարնանը դատարկ տներում աղաստանած անօթեւաններին պրտսխելու բասիջիների փորձերը խռովություններ հանգեցրին Շիրազում, Առակում եւ Մշեդում: Մշեդում ֆրանց հետեւանքով վնասվեց մոտ հազար հանրային շինություն:

Այս երեւույթները լրջորեն մտահոգում են մոլլաներին: Դրանք ապացուցում են, թե տնտեսական աղետը որքան խորն է դիմել սոցիալական հիմքերին: Բնակվարձը սաստիկ աճել է՝ գները ցատկոտում են, ազատ տուկայում 1 կգ տավարի միսն արժե 5 հազար ռիալ, որը կազմում է պաշտոնական աշխատավարձի մեկ քառորդը: «Սայոլա» իրանական ավտոմեքենայի գինը համարժեք է տասը տարվա նվազագույն աշխատավարձին: Համեստ երկսենյականոց բնակարանի վարձը կազմում է դպրոցական եկամտի երկու երրորդը կամ ավելին: Շատերն ստիպված են լրացուցիչ աշխատանքով զբաղվել: Հենց իրանցի փորձագետների խոստովանությամբ, էժան գներով հիմնական սքեմների գնման իրավունք տվող կտրոնները բավարարում են ադքաս ընտանիքների կարիքների սոսկ 15 տոկոսը: Վերջերս կայացած բյուջետային բանավեճերի ժամանակ խորհրդարանում նոր հասկացություններ ընդունվեցին ընչազուրկների օգտին, դրանով՝ իսկ դատապարտելով Ռաֆսանջանիի եւ իր տեխնոկրատների սկսած բարեփոխումների բացերը: «Հեղափոխության նպատակը արդարությունն էր եւ ոչ թե հարստությունը, ինչպես կարծում են շատերը», այս տարվա հունվարի 7-ին փորձեց արդարանալ Ալի Խամենեին: Սակայն դրան շատերն այլեւս չեն հավատում:

Խամենեին եւ Ռաֆսանջանին արդյոք հակառակորդնե՞ր են, թե համախոհներ. իրենց այս հարցն են տալիս տարբեր երկրների գործիչներ: «Իրականում դա այնքան էլ կարեւոր չէ, ասում է մի հրատարակիչ: Նրանք գոյատեւման համար մեկը մյուսի կարիքն ունեն: Ռաֆսանջանին չպարտված փոքրագույնն է: Մենք նրան Գորբաչով էինք կարծում, լավագույն դեպքում նա Խրուշչով է: Ներկա պահին ոչ ոք շահագրգռված չէ նրա տապալմամբ»: Ժամանակին խորհրդարանը ողջունել էր այն ճարտկությունը, որով Ռաֆսանջանին կարողացել էր լռեցնել ամենամոլի արմատականներին: Սակայն դա տեսողպտրանք էր. նրանց հեռացումը տեղ բացեց գերպահպանողական աջերի համար: Ռաֆսանջանին բազմիցս՝ խոստովանել է հոգեւոր առաջնորդի Խամենեիի գերակայությունը: Սակայն նրանք երկուսն էլ իրականում կրում են Թեհրանից 150 կմ հարավ գտնվող Ղոմ կրոնական քաղաքի գործիչների ազդեցությունը: Մարգարեի ժառանգներին «սայեդներին» հատուկ սեւ փաթրոցին հակառակ, Խամենեին այնքան էլ հարգված չէ: «Այստեղ նա ասվածաբանության մեջ փոքր տղայի տեղ է անցնում, նշում է շիիզմի մի մասնագետ: Նրա այրքոլլա տիտղոսը բնավ կնոջված չէ իր կրոնական գիտելիքների հետ»: Սրբազան Ղոմ քաղաքում դիտելով կրոնավորների երեկոյան խաղաղ երթը, դժվար է պատկերացնել, որ աշակերտների դավանաբանական վեճերն այնտեղ երբեմն լուծվում են մենամարտերով, եւ որ Իրանի առաջան վճռվում է նաեւ Ղոմ քաղաքում: Խորհրդավորությամբ պատված 20 հազար փաթրոցավորների այդ քաղաքը յուրովի է ցույց տալիս խոմեյնիզմի ձախողումը: Արժանավոր ժառանգորդի բացակայության պատճառով իմամի ծավալուն նպատակի իրագործումն իրենից հետո չշարունակվեց: «Նա քարոզում էր կոլեկտիվ, ամբողջական իսլամ, նշում է Իրանին քաջատեղյակ ֆրանսիացի մի հետազոտող: Տնտեսական, քաղաքական եւ սոցիալական լծակները, ամեն ինչ պետք է իսլամական լինեին: Սակայն այժմ ոչ ոք չի վիճարկում, որ գործառնը նույնքան կարիք ունի լավ ճարտարագետների, որքան լավ մահմեդականների: Այժմ սահմանափակվում են բարոյապես իսլամական հասարակության կառուցմամբ: Այդպիսով, ի հայտ է գալիս յուրօրինակ աշխարհիկություն»: Կարգախոսները չեն խանգարում, որ երկրում դժգոհություններ լինեն: «14 տարին շատ է, խոստովանում է Ռաֆսանջանիի մերձավոր պատանյաներից մեկը, ինչ էլ անենք, աշխատանքը տեղեր բաժվելու են, Իրանը ընտրություն չունի. գոյատեւման համար նա ստիպված կլինի բացվել»: ■

1992 թվականի ապրիլին, երբ տեղի էին ունենում Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի ընտրությունները, արեւմտյան մամուլը ոչ միայն չէր նկատում Իրանի սոցիալ տնտեսական ոլորտի «բերությունները», այլ նույնիսկ գովեստի խոսքեր չէր խնայում Իրանի պրագմատիկ նախագահի հասցեին: Սակայն, երբ այդ ընտրությունները եւս չտվեցին «դրական» արդյունք, Իրանի յուրահանչյուր խոյլ եւ ծեռնարկում նախկինի պես դարձավ արեւմտյան մամուլի թիրախն առավել ուժգնությամբ: Վերջերս Իրանում պայքար է սկսվել մի երեւույթի դեմ, որն անվանում են «մշակութային հարձակում»: Սրա նպատակն արգելափակումն է մուտքն այն վարակիչ բարքերի, որոնք հակասում են իսլամական մշակույթին, չժխտելով արեւմտյան մշակույթի հետ առողջ շփումները: Իրանի Իսլամական հեղափոխության ղեկավար Այաթոլլա Խոմեյնին մի առիթով ասել է. «Իհարկե, շփումը եւ փոխանակումը Արեւմուտքի մշակույթի հետ այլ հարց է»: Արեւմտյան մամուլի ոչ կողմնակալ մոտեցումը Իրանի նկատմամբ ապացուցելու համար բերենք մեկ օրինակ. Սաուդյան Արաբիան նույնպես իսլամական երկիր է, որ կանայք ոչ միայն մինչեւ օրս ընտրելու եւ ընտրվելու իրավունքից զուրկ են (Իրանի խորհրդարանում կա 9 կին պատգամավոր), այլ նույնիսկ ավտոմեքենա վարելու իրավունք չունեն եւ կնոջ ծածկվածությունն առավել խստությամբ է կիրառվում, քան Իրանում: Սակայն, եթե չասենք բնավ, ապա արեւմտյան մամուլը չափազանց հազվադեպ է անդրադարձել այդ հարցին, այն էլ ոչ քննադատաբար: Իրանի սոցիալ տնտեսական դժվարությունները նույնպես հատուկ «ուշադրության» առարկա են Արեւմուտքի մամուլում: Այսպես օրինակ, վերջերս անգլիական «Գարդիան» օրաթերթը «Խոմեյնիի հաջորդները գաճաճներ են հանը», խիստ քննադատաբար է մոտեցել Իրանում տեղի ունեցող անցուդարձերին: Նման մի հոդված է տպագրվել ֆրանսիական «Էքսպրես» շաբաթաթերթում, որը ներկայացնում ենք ձեր ուշադրությանը, ծանոթանալու համար արեւմտյան տեսակետներին:

Է.Ք.

Ուշադրություն գործարար մարդկանց

Ձեր ֆիրմայի բիզնեսը զգալի վերելք կապրի, եթե Դուք եւ Ձեր օգնականները ունկնդրեք մասնագիտական դպրոցի մեկամսյա դասընթացները կատարելագործված ծրագրով: Շրջանավարտները կստանան միաժամանակ մենեջերի եւ բրոկերի որակավորում:

Դասախոսությունները ժամը 14.00-ից: Դպրոցի հասցեն՝ Անդրեյ Սախարովի հրապարակ (Նալբանդյան 13):

Եկեք մ. զանգահարեք մ. հենց այսօր:

Հեռ. 56 05 91, ժամը 10-ից 17-ը:

Լուրերի Հոսք

Վերազգային կառերով առնվազն 174 հանցախումբ

Մոսկվա: Ռուսաստանի իրավապահ մարմինները տեղեկություններ ունեն 174 հանցախմբերի մասին, որոնք գործում են ոչ միայն այդ հանրապետության տարածքում, այլեւ ԱՊՀ բոլոր երկրներում եւ հեռավոր արտասահմանի 29 երկրներում: Այդ մասին Մոսկվայում կայացած բրիֆինգում հայտնեց Ռուսաստանի ներքին գործերի նախարարության կազմակերպված հանցագործության դեմ պայքարի գլխավոր վարչության ներկայացուցիչ Միխայիլ Եգորովը: Վերազգային հանցավոր գործունեության հիմնական ձեւերն են Ռուսաստանից հումքի դուրս բերումը, զենքի փոխադրումն ազգամիջյան հակամարտությունների վայրեր, գողացված մեքենաների եւ թմրադեղերի առեւտուրը: Բացի դրանից, Ռուսաստանից դուրս են բերվում մեծ քանակությամբ մշակութային արժեքներ եւ հնություններ: Հանցավոր գործունեության շատ ձեւեր, մասնավորապես հումքի դուրս բերումը, անհնար են առանց կաշառավության եւ կառերի: Սնար

Կրկի՞ն բռնապետություն

«Ռուսաստանյան միասնություն» ընդդիմադիր խորհրդարանական դաշինքի համակարգիչ խորհուրդը հինգշաբթի օրը Մոսկվայում կայացած դոնբաց նիստում հայտարարեց, որ առկա է երկրում նախագահ Ելցինի սնանկացած վարչակարգի կողմից բռնապետության հաստատման նախապատրաստման վտանգ: Դաշինքի ղեկավարների կարծիքով, նախագահի այդ դիտավորությամբ է բացատրվում ժողովրդական ավորների խորհուրդների վարկաբեկման նպատակով Մամուլում ծավալված արշավը: «Ռուսաստանյան միասնության» հայտարարությամբ «բոլոր ազնիվ մարդկանց», հասարակական քաղաքական ուժերին կոչ է արվում իրենց տեսակետն արտահայտել այդ հարցի առթիվ: Տեղական խորհուրդներին առաջարկվում է իրենց նստաշրջաններում քննարկել այս տարվա աշնանը Ռուսաստանի նախագահի եւ ժողովրդական ավորների վաղաժամկետ ընտրությունների անցկացման նպատակահարմարության հարցը: Դաշինքի մեջ մտնող խմբերի համակարգիչներն առաջարկել են տեղերում ձեռնամուխ լինել տահմանադրական կարգի պաշտպանության հասարակական կոմիտեների ստեղծմանը: ԻՏ

Կոզիրեւը հանդիպեց Իսրայելի դեսպանի հետ

Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը հինգշաբթի օրը Մոսկվայում ընդունեց Իսրայելի դեսպան Խայիմ Բար Լեւին: Կարծիքների փոխանակություն տեղի ունեցավ Մերձավորարեւելյան հաշտության բանակցությունների վիճակի, ինչպես նաեւ ռուս-իսրայելական հարաբերությունների հարցերի շուրջ: Ա. Կոզիրեւը արտահայտվեց վերջին ժամանակներս արաբա-իսրայելյան երկխոսության ընթացքում ծագող խոչընդոտների վերացման օգտին: Խ. Բար Լեւը հավաստեց Մերձավորարեւելյան հաշտության բանակցություններին այսուհետեւ էլ մասնակցելու Իսրայելի պատրաստակամությունը: Իր երկրի կառավարության անունից դեսպանն արտահայտվեց արաբա-իսրայելյան բանակցություններում Ռուսաստանի հովանավորչական եռանդուն դերի օգտին: ԻՏ

Կանխվեց հանցախմբի զինված ընդհարումը

Մոսկվայի միլիցիայի հատուկ ջոկատայինների օգնությամբ հաջողվել է կանխել երկու հանցախմբերի զինված ընդհարումը: Ինչպես հինգշաբթի օրը «ԻՏ»-ին հայտնեց Մոսկվայի ՆԳ գլխավոր վարչության հասարակական կապերի կենտրոնը, «Սիսս» սրճարանի մոտ ձերբակալվել են տարբեր հանցախմբերի 17 պարագլուխներ: Կենտրոնը նաեւ հերքեց Չեչնիայի արտգործնախարարության հաղորդումը Մոսկվայում չեչենների սպանությունների ալիքի վերաբերյալ: Օպերատիվ ամփոփագրի համաձայն, նախորդ օրն սպանվածների մեջ չեչեններ չեն եղել: ԻՏ

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

Կողմ են հանցագործությունների դեմ պայքարի համակարգմանը

Հինգշաբթի օրը Մինսկում տեղի ունեցավ Հանրակցության երկրների ներգործնախարարությունների խորհրդակցություն, որը նվիրված էր ԱՊՀ տարածքում կազմակերպված հանցագործությունների եւ վտանգավոր հանցածեւերի դեմ պայքարի համատեղ միջոցառումների մշակմանը: Հանդիպումը կոչված էր կառավարությունների ղեկավարների մոսկովյան հանդիպման նախապատրաստման շրջանակներում, հաղորդել է Ինտերֆաքսը: Խորհրդակցության մասնակիցներն արտահայտվեցին միջոցների մարմնի ստեղծման օգտին, որը կիամակարգի հանցագործությունների դեմ ուղղված պայքարի ջանքերը: Բացի դրանից, ծրագրի նախագծով նախատեսվում է համակարգել ջանքերը տնտեսական հանցագործությունների, ինչպես նաեւ ԱՊՀ երկրներից մշակութային արժեքների ապօրինի դուրս բերման դեմ մղվող պայքարում:

ԻՖ

Կիեւում մալարիայով հիվանդացել է 33 մարդ

Փետրվարին Ուկրաինայի մայրաքաղաքում արձանագրվել է մալարիայով հիվանդանալու 33 դեպք: Հիվանդների 80 տոկոսը կազմում են 6-11 տարեկան երեխաները: Մարտի 3-ին հիվանդության օջախների վերացման միջոցառումներն են ենթարկվել Կիեւի պետական վարչակազմին առընթեր արտաքին իրավիճակների համակարգիչ խորհրդի շտաբ նիստում: Համաճարակաբանները գտնում են, որ վարակի տարածման աղբյուրն Աֆղանստանից, Պակիստանից, Հնդկաստանից եւ Տաջիկստանից եկած եւ Ուկրաինայի տարածքում ապօրինաբար ապրող քաղաքացիներն են:

ԻՖ

Սանկտ-Պետերբուրգում հավաքագրում են կամավորների

Մարտի 4-ին Սանկտ-Պետերբուրգի քաղխորհուրդը տվեց իր համաձայնությունը քաղխորհրդի պատգամավոր Յուրի Բելյաեւի նկատմամբ քրեական գործ հարուցելու վերաբերյալ: Նա մեղադրվում է «ազգային բնականի հրահրում եւ ազգային արժանապատվության ոտնահարում» հոդվածով: Յու. Բելյաեւը կամավորներ է հավաքագրում Հարավսլավիա ուղարկելու համար: Քաղաքի դատախազը մտադիր է ձերբակալել նրան նույնիսկ մինչ դատը, սակայն դա դեռ հնարավոր չէ անել, քանի որ Բելյաեւը գտնվում է Հարավսլավիայում: Որոշ տվյալների համաձայն, նա մասնակցում է մարտական գործողություններին սերբերի կողմից:

Անհայտ անձնավորությունը պայթեցրել է իրեն

Հինգշաբթի օրը Սանկտ-Պետերբուրգի «Մետրոպոլ» օթեւանի մոտ անհայտ մի անձնավորություն նռնակով պայթեցրել է իրեն եւ կողքին կանգնած կնոջը, որն ըստ երեւույթին իր ծանոթուհին է եղել: Երկուսն էլ հիվանդանոց մահացել են: Ականատեսների վկայությամբ, դրանից առաջ նրանք վիճել էին: Զոհվածների անձերը պարզվում են: Ուրիշ տուժածներ չկան: Պայթյունի հարվածային ալիքից ջարդվել են օթեւանի առակները:

ԻՖ

Խասբուլատովը հանդիպեց կին պատգամավորների հետ

Մոսկվա: Ռուսաստանում կանանց վիճակը հասարակական իրավիճակի եւ երկրում տիրող կամայականության արտացոլումն է, մարտի 5-ին Կանանց միջազգային օրվա առթիվ Ռուսաստանի Գիս կին պատգամավորների հետ կայացած հանդիպման ժամանակ հայտարարեց խորհրդարանի նախագահ Ռուսլան Խասբուլատովը: Նա հայտարարեց, որ «լինելով վաղաժամ ընտրությունների կողմնակից», ինքն անհրաժեշտ է համարում Ռուսաստանի խորհրդարանում կանանց ավելի մեծ ներկայացուցչությունը: Հարկավոր է փոխել ընտրական օրենքը եւ հասարակությանն ասիճանաբար մոտեցնել այդ անհրաժեշտության ըմբռնմանը, ասաց նա:

Մեկնաբանություն

Արվեստի վաղ ձեւերը ուշադրության կենտրոնում

Այսօր, երբ գիտության եւ մասնավորապես արվեստագիտության հարցերը մի տեսակ երկրորդ պլան են մղվել, այս ասպարեզում տեղի ունեցող ամեն, թեկուզեւ փոքրիկ տեղաշարժ առավել հետաքրքրություն է առաջացնում պահանջելով նաեւ համապատասխան հասարակական արձագանք: Ուրախալի մի լուր ստացանք վերջերս Բելգիայի Լիեժ քաղաքից, որտեղ անցած տարվա վերջին կայացել էր միջազգային գիտաժողով «Երաժշտության նախապատմությունը» թեմայով: Ի թիվս աշխարհի տարբեր երկրների (Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Իսրայել, Ամերիկա եւ այլն) գիտնականների, այդ ժողովին մասնակցել եւ իր զեկուցումով գիտական շրջանակներում նկատելի աշխուժություն է առաջացրել հայ գիտնական Արա Դեմիրխանյանը:

Նրա հետ հանդիպեցինք ՀՀ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտում, որտեղ աշխատում է: Երիտասարդ գիտնականը հանրությանն առավելապես հայտնի է որպես Ավան-Առինջի տարածքում Արատեսյան ժամանակաշրջանի բնակավայրի հայտնաբերող: Նրանից տեղեկացանք, որ հիշյալ կոնֆերանսին նախկին Խորհրդային Միությունից հրավիրված են եղել ընդամենը մեկ հոգի Ռուսաստանից եւ մեկն էլ՝ Հայաստանից: Պատահական չի եղել, անշուշտ, նման ընտրությունը:

Արդեն տասը տարուց ավել է, ինչ մեր ակադեմիայի այս ինստիտուտում հետեւողականորեն զբաղվում են արվեստի վաղ ձեւերի ուսումնասիրության հարցերով: Դրանց արդյունքը հանդիսացել են մոտ չորս տասնյակի հասնող գիտական աշխատանքները, հոդվածներն ու զեկուցումները՝ նվիրված մեր երկրի պատմությանն այնքան բնորոշ նախնադարյան արվեստի տարբեր ժանրերին՝ ժայռապատկերներ, կիրառական արվեստի տարբեր տեսակներ, քանդակագործություն, գեղանկարչություն եւ այլն: Հայ գիտնականների համընդգրկուն հետազոտություններն շնորհիվ հաջողվել է դարձել շատ մանրամասներ կազմված մարդկությանն գեղարվեստական մտածողության այդ վաղ շրջանի դրսեւորումների հետ, եւ ամենակարեւորը՝ հայտնաբերել մեր նախնիների մտածողության այն նուրբերը, որն ընկած է արտաքուստ միմյանց հետ երեւութական աղերս չունեցող, բայց խորքում սերտորեն կազմված արվեստի տարբեր տեսակների հիմքում:



Արվեստի տարբեր տեսակների խորը գիտական ուսումնասիրության շնորհիվ հնարավոր դարձավ եզրակացություններ անել նաեւ նախնադարի երաժշտության մասին:

Ձեռք բերված այս կարեւոր արդյունքները հիմք հանդիսացան, որ Արա՝ Դեմիրխանյանի նախաձեռնությամբ Արվեստի ինստիտուտը Հայաստանի կոմպոզիտորների միության եւ Հայաբանարհային մշակույթի խորհրդի (Մոսկվա) հետ համատեղ 1986 թ. Դիլիջանում կազմակերպեր երաժշտության ծագման խնդիրներին նվիրված գիտական կոնֆերանս, որին մասնակցեցին մեծ թվով գիտնականներ աշխարհի տարբեր վայրերից:

Գրեթե նույնատիպ թեմատիկա ուներ նաեւ վերջ նշված լիեժյան գիտաժողովը, որը հրավիրվել էր դարձյալ ելնելով հարցի կարեւորությունից եւ հրատապությունից:

Այն, ինչպես վերը հիշատակեցինք, նվիրված է եղել երաժշտության ծագման ընդհանուր հարցերին, նաեւ երաժշտական առանձին գործիքների առաջացմանը: Պարզվում է, որ մեր մեկ այլ հայրենակից էլ է մասնակցել գիտական ընթերցումներին, բայց արդեն Փարիզից: Նրա՝ Էդուարդ Բարսեղյանի զեկուցումը վերաբերել է Արեւմտյան Հայաստանում գտնված եւ այժմ Լուվրի թանգարանում պահվող ֆրեյտահարի բրոնզյա արձանիկի (2-ր հազարամյակ Ք. ծ. ա) վերլուծությանը:

Արա Դեմիրխանյանը ներկայացրել է «Երաժշտական գործիքը որպես հնչող խորհրդանիշ նախնադարյան մշակույթում» թեմայով իր զեկուցումը, որտեղ անդրադարձել է հնագույն նախածեւի ընդունությանը եւ արվեստի տարբեր տեսակներում դրա արտահայտության բազմազան ձեւերին: Օրինակներ են բերվել հայկական մշակույթի վաղ հուշարձաններից: Գիտնականն այս առումով կարեւորել է եւ Գրիգոր Լուսավորիչի նշանավոր Տեսիլքը, եւ հատկապես հեթանոսական շրջանից մեզ հասած «Վահագնի ծնունդը» երկը, որտեղ, ըստ նրա, «հրաշքով է պահպանվել մեր նախնիների աշխարհայացքային նմանատիպը»:

Վերջում ասենք, որ Լիեժի նշանավոր համալսարանը բազմաթիվ գիտական նախաձեռնությունների հեղինակ է, ինչպես այս կոնֆերանսն էր: Վերջինիս հայ արվեստաբանի մասնակցությունը եւ ունեցած հաջողությունը, ըստ մեզ, կարեւորվում է ոչ միայն գիտական միջազգային կառույցների շարունակելիության տեսանկյունից, այլեւ մեր գիտական հաստատությունների հետագա համագործակցության առումով: Մանավանդ, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ այս համալսարանի գիտախումբն սկսել է զբաղվել Արեւմտյան Հայաստանում, Կարսից 22 կմ հեռավորության վրա գտնվող Քյորեֆ բնակավայրում ժայռապատկերների ուսումնասիրությամբ:

ԼԵՎՈՆ ԼԱԶԻԿՅԱՆ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

Սորտի թագուհին հավաք է հեփորում

Մարտի 12-ին Ֆորոնսոյում ծածկած մարզադաշտի տանիքի տակ կնկեկարկի թեթեւ ատլետիկայի աշխարհի ծմեռային մրցաշրջանը: Համագործակցության

ոլորտներից սորտի թագուհու ասոցիացիաների խոշորագույն այդ մրցումներին մասնակցելու իրավունք են ստացել [illegible] Հայաստանը, Ուկրաինան, Բելառուսը [illegible] զախստանը, Հայաստանը եւ Մոլդովան:

Հայաստանի 2 երիտասարդ թեթեւատլետներ Արմեն Սարգիսյանը (Գյումրի) եւ Պարգեւ Գրիգորյանը (Երեւան) նոյտաքանդված մարզվում են, եւ առաջիկա մրցումներում նրանց նորածուսը նաեւ գործնական նախապատրաստություն կլինի աշխարհի ամառային առաջնությանը, որը հունիսին կանցկացվի Գերմանիայի Շտուտգարտ քաղաքում: Իսկ առայժմ եռաքայլում Սարգիսյանի լավագույն արդյունքը հավասար է 17 մետր 5 սանտիմետրի: Հեռաքայլում նա ցույց է տվել 8 մ 9 սմ արդյունք: Գրիգորյանը եռաքայլում հաղթահարել է 17 մետր մեկ սմ: Աշխարհի ծմեռային առաջնությանը նախատեսված է նաեւ նորվեգացի ռեկորդակիր Ռոբերտ Էմմիկանը, ում անհատական ծրագրով մարզումները շարունակում է Ֆրանսիայում:

Այս տարի Հայաստանի թեթեւ ատլետները պետք է ելույթ ունենան նաեւ Սան-Սեբաստիանում մայիսի 30-ից հունիսի 2-ը անցկացվելիք Եվրոպայի երիտասարդական առաջնությունում: Այստեղ մարզիչները հույսեր են կապում կաղանցի Մարաս Սարգսյանի հետ: Հեռաքայլում նա իր հասակակիցների մեջ աշխարհում լավագույն արդյունքներից (758 սմ) մեկն ունի: Հիշեցնենք չէ նշել, որ երիտասարդների [illegible] վերջին առաջնությունում [illegible] ցույց է տվել 772 սմ [illegible]

Վալերի Սալովը: Մրցաշրջանային աղյուսակում հիմա երկիբնանություն է: Այն 7 հնարավորից 5-ական միավորով գլխավորում են Գարի Կասպարովն ու Վիշվանաթան Անանդը:

Տիգրանը լրացնում է միջազգային նորման

Երեւանի պետհամալսարանի ուսանող 17 ամյա Տիգրան Նալբանդյանը մեծ հաջողության ասավ Մոսկվայում ընթացող շախմատի միջազգային մրցաշարում: 11 հնարավորից վաստակելով 7,5 միավոր, նա լրացրեց միջազգային վարպետի նորման: Ուրախալի է, որ վերջին երեք ամսվա ընթացքում սա պատանի շախմատիստի երկրորդ նման հաջողությունն է: Առաջին անգամ միջազգային բնագիծը Տիգրանը հաղթահարեց դեկտեմբերին, Մոսկվայում անցկացված մեկ այլ ներկայացուցչական մրցաշարում:

Գ. Հ.

Բաժինը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Սուր Գրչով

Խոկտեյլ «Հայկական» կոնյակով

❖ Հիմա տրանսպորտում հաղթավարությունը կախվելու տեղը գիջելն է:

❖ Քչակերն ուզում էր արդելու համար: Շատակերը մեռնում էր ուտելու համար: Հիմա եւ մեկը, եւ մյուսը ուզում են սոված չմնալու համար: Կլանի եւ մահվան խնդիրը լուծված է:

❖ Մարդը, վերջապես, իր լիարժեքությունը զգաց, երբ մուրացկանությունը մտավ նրա հաղթաթղթական իրավունքների շարքը:

❖ Դիվանագիտություն ծանրաքեռնված տրանսպորտում. քանի դեռ չեն նստել, խնդրողի դերում են: Նստեցին՝ հրամայողի:

❖ Մորգանի խնամին 40 տոննա դեղորայք եւ մանկական սնունդ է ուղարկել Շիրվանզադեի թոռնիկներին:

❖ Ատոմակայանը պետք է բացել նույն կերպ, ինչ կերպ որ փակել են. ցույցեր, հացադուլ, որին պետք է մասնակցեն նույն գործող անձինք:

❖ Առաջարկվում է փայտից կառուցել խորհրդարանի մի նոր շենք՝ գալիք ծմռանը բնակչությանը վառելիքով ապահովելու համար:

Մատուցողներ՝
ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

«Արամ Խաչատրյան» Ֆիլհարմոնիկ սրահ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ԴՎԱԳԱԽՈՒՄԲ

68-րդ համերգաշրջան, 4485-4486 հայոց թվական

Համերգաշրջանի հովանավորն է
Հայկական բարեգործական ընդհանուր միությունը

7 Մարտի

Լուսինե Զաքարյանի հիշատակին

ՍԵՐԳԵՅ ԱՍԱՏՐՅԱՆ — Պոլիֆոնոդիա «Հավուն-հավուն»
ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵԹՀՈՎԵՆ — Կոնցերտ դաշնամուրի եւ նվագախմբի համար թիվ 5 (Անահիտ Ներսիսյան)
ՅՈՀԱՆՆԵՍ ԲՐԱՀՄՍ — Սիմֆոնիա թիվ 4

Գեղարվեստական ղեկավար
եւ գլխավոր դիրիժոր
ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ



Սկիզբը ժամը 14.00

Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում:

digitised by A.R.A.R.@

ԴՈՒՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ՄԵԿՆԵԼ
ԱՄԵՐԻԿԱ • ԱՍԻԱ • ԵՎՐՈՊԱ • ԱՎՍՏՐԱԼԻԱ

LEVON TRAVEL

7 ՕՐ ՀԱՆԳԻՍՏ ՍՈՖԻԱՅԻ
ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ
ԿԱՀԻՐԵ
ԱԲՈՒ-ԴԱԲԻ
ԲԱՀՐԵՅՆ
ԲԱՆԳԿՈԿ
ԴՈՒԲԱՅ
ՔՈՒՎԵՅԹ
ԹԵԼ-ԱՎԻՎ
ԱԹԵՆՔ
ԲԵՅՐՈՒԹ
ՖՐԱՆԿՖՈՒՐՏ
ՍՏԱՄԲՈՒԼ
ԼՈՆԴՈՆ
ՄԻԼԱՆ
ՄՅՈՒՆԽԵՆ
ՍՏՈԿՀՈԼՄ

«ԼԵՎՈՆ ԹՐԱՎԸԼԸ»
ՍՊԱՍՈՒՄ Է ՁԵԶ

Ամեն ուրբաթ ԵՐԵՎԱՆ-ՍՈՖԻԱ-ԵՐԵՎԱՆ

ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՁԵՐ
ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

PUBLISET

Մեր հասցեն ԵՐԵՎԱՆ. Սայաթ-Նովա 10 հեռ. 582-831. 567-208

LEVON TRAVEL

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh®
համակարգչային շարուածոց
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ծնողական եւ տարտեսակների
հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱԲՅԱՆ

Ստորագրուած է տպագրութեան 5.3.1993

Հայերի Համար

Գազ եւ նավթ Վրաստանի տարածքով

Մարտի 4-ին Կիեւում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Ուկրաինայի եւ Վրաստանի վարչապետներ Լեոնիդ Կուչման եւ Թենգիզ Սիգուան հայտարարեցին, որ ձգտում են ընդլայնել երկու երկրների միջեւ տնտեսական եւ մշակութային համագործակցությունը: Ուկրաինայի հեռուստատեսությանը տված հարցազրույցում Ուկրաինայի փոխվարչապետ Իգոր Յախնովսկին նշեց, որ Վրաստանը ռազմավարական նշանակություն ունի Ուկրաինայի համար, քանի որ միայն Սեւ ծովն է բաժանում երկու պետություններին: Նա ընդգծեց, որ ավելի նախընտրելի է Ադրբեջանից եւ Թուրքմենստանից էներգակիրներ ստանալը, քան Ռուսաստանից: Նավթն ու գազը խողովակաշարով կառավի Վրաստանի Փոթի նավահանգիստը: Թ. Սիգուան ընդունեց, որ առեւտրի պտորում Ուկրաինան դրական սալդո ունի Վրաստանի հետ: Նա մտադրություն հայտնեց վերացնել այդ դիսբալանսը եւ Ուկրաինա առաքել բարձր ամրություն ունեցող խողովակներ նավթային եւ գազային արդյունահանության համար, կաբելներ, մարգանեցի երկաթամիաձուլվածքներ:

ՐՖ

Դինոզավրի ձուն կարող է ազդել Մոնտեվիդեոյի ռադիոսարքի աշխատանքի վրա

Ուրուգվայի Դուրասնո քաղաքի շրջակայքում հայտնաբերվել է դինոզավրի ձու, որը, ըստ մասնագետների հաշվարկների, կարող է 50-75 հազար տարվա վաղեմություն ունենալ: Ինչպես հաղորդում է տեղական մամուլը, գյուղացի Կարմելո Վիլյանուեւոյը հողը փորելիս անսպասելիորեն դեմ է առել խոշոր քարացած գնդի: Երբ նա տուն է բերել անսովոր գտածոն, գնդի մոտ աշխատանքը դադարեցրել է տրանզիստորային ռադիոընդունիչը: Վիլյանուեւոյը որոշել է բացել գունդը եւ ներսում գտել է, իր իսկ խոսքերով, «սուր սառցակտորների նման բաներ»: Ուրուգվայի երկրաբանության ինստիտուտի գիտնականները պարզեցին, որ հայտնաբերված գունդը դինոզավրի ձու է: Այժմ պետք է պարզել, թե ինչով է պայմանավորված «անցյալի պատվիրակի» այդքան տարօրինակ ազդեցությունը ռադիոսարքի աշխատանքի վրա:

Սնարք

Էլեկտրաֆորեզի կիրառման նոր մեթոդը

Ուկրաինայի պետական մրցանակի է ներկայացվել Չեռնովցի քաղաքի մի խումբ բուժաշխատողների կողմից մշակված էլեկտրաֆորեզի նոր մեթոդը՝ սուր բորբոքային պրոցեսները բուժելու համար: Ինչպես ՌԻԱ-ի թղթակցին ասաց խմբի ղեկավար, պրոֆեսոր Վլադիմիր Ալեխնենկոն, ավանդական ձեւը բորբոքված օջախի վրա բարձր հաճախականության ալիքների արտաքին ազդեցությունը փոխարինվեց օջախի գոտում էլեկտրոդների անմիջական կիրառմամբ: Դրանով իսկ ստացվում է դեղորայքի նպատակային ազդեցությունը, որն օրգանիզմ է առավում այդ ալիքների օգնությամբ: Նոր մեթոդի օգնությամբ թոքերի բորբոքումը բուժելու համար անհարժեշտ է 3 անգամ պակաս ժամանակ:

Սնարք